

Ալեքսան Յ. Յակոբեան  
Պատմ. գիյր. թեկնածու

**ՍԱՐԳՈՆ Բ-Ի ԱՐՇԱՒԱՆՔՆ ՈՒՐԱՐՏՈՒ  
ԵՒ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ  
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆԸ**

Մաս առաջին: Սարգոն Բ-ի Ք. ա. 714 թ. արշաւանքի  
երթուղին մինչև Ուրարտու \*

**Բանալի բառեր** – Ուրարտու, Ասորեստան, Մաննա, Զիկիրտու, Անդիա, Մուծածիր, Ուրմիա լիճ, Սարգոն Բ, Ռուսա Ա:

Մուտք

Ասորեստանի արքայ Սարգոն Բ-ն (Ք. ա. 722/721–705) իր իշխանության ութերորդ տարում կատարած արշաւանքը դէպի Մաննա, Զիկիրտու և Ուրարտու մանրամասն կամ համառօտ ձևով նկարագրել է բազմաթիւ վիմագրերում և յատկապէս՝ կաւէ մեծ սալիկի վրայ արձանագրուած՝ Աշշուր աստծուն ուղղուած ընդարձակ «նամակում», որը գրականութեան մէջ յաճախ անուանոււմ է Լուվրի աղիւսակ<sup>1</sup>:

Այդ արշաւանքի երթուղու և այլ հանգամանքների վերլուծութիւնը

\*Յօդուածն ընդունուել է տպագրութեան 31.01.2014:

1 Այս և միւս վիմագրերը բազմաթիւ հրատարակութիւններ ու թարգմանութիւններ ունեն (վերջին բնագիրը՝ զուգադիր գերմաներէն թարգմանութեամբ, տնն **W. Mayer**, Sargons Feldzug gegen Urartu – 714 v. Chr., Berlin, 1984): Հայ ընթերցողի համար առաւել հասանելի և շրջանառու է գոյր Դեակոնովի ռուսերէն թարգմանութիւնն է (**И. М. Дьяконов**, Ассири-вавилонские источники по истории Урарту, – «ВДИ», 1951, N 2 /36/ և N 3 /37/, յետայսու՝ АВИИУ, 1951, N 2 և N 3), որը կատարուած է Ֆրեդերիկ Թիրո-Դանժէի հրատարակած բնագրից (զուգադիր ֆրանսերէն թարգմանութեամբ. **F. Thureau-Dangin**, Une relation de la huitième campagne de Sargon /714 av. J. C./, Paris, 1912): Այդ պատճառով յղումները կատարելու ենք հիմնականում նրան՝ երբեմն համեմատելով հրատարակուած բնագրերի կամ այլ թարգմանութիւնների հետ: Լուվրի աղիւսակի բնագրի մեծ հատուածներ հայերէն է թարգմանել Հրայր Աւետիսեանը (Հայ ժողովրդի պատմութեան քրեատոմատիա, հատ. 1, կազմ. **Պ. Հ. Յովհաննիսեան, Ա. Գ. Աբրահամեան**, Եր., 1981, էջ 24–34). նրա բնագիրն օգտագործում ենք՝ կատարելով չնչին փոփոխութիւններ (յետայսու՝ ՀԺՊ քրեատոմատիա):

Զ (ԺԲ) քարի, թիվ 1 (45) հունվար-մարտ, 2014

Վէմ համահայկական հանդես

կատարուած է բազմաթիւ հայ ու օտարազգի հետազօտողների դասական և նորօրեայ յատուկ ուսումնասիրութիւններում, առանձին անդրադարձերում, ինչպէս նաև ամփոփիչ աշխատանքներում<sup>2</sup>: **Սակայն Ասորեստանի արքայի հաղորդումների նոր ուշադիր քննութիւնը և դրանց աւելի ծաւալուն համադրումը ուշ շրջանի յունա-հռոմէական, ասորական և հայ մատենագիրների պատմաաշխարհագրական վկայութիւնների հետ ստիպում է կրկին վերադառնալ Սարգոնի երթուղու ճշգրտման խնդրին:**

**Ստորև ներկայացուող մօտեցման հիմքում ընկած է նախ և առաջ Ուրարտուի (Վանի թագաւորութիւն, Արարատեան թագաւորութիւն, Բիաինէլէ<sup>3</sup>) և Մաննայի միջև յիշատակուող *Ջիկիրպու* և *Անդիա* ոչ մեծ երկրների տեղորոշման նոր, նախորդ հետազօտողների կողմից ամենևին չարծարծուած տարբերակը, որը ծագեց է դարի հայոց «Աշխարհացոյց»-ի քննական բնագրի կազմման առիթով<sup>4</sup> հին Հայաստանի և յարակից երկրների գաւառաբաժանման մասին մեր պատմաաշխարհագրական պատկերացումների յստակեցումից յետոյ<sup>5</sup>:**

2 Գրականութեան վերջին առաւել մանրակրկիտ ամփոփումները տեն **P. Zimansky**, *Urartian geography and Sargon's Eighth Campaign*, «Journal of Near Eastern Studies», Vol. 49, N 1 (Chicago, 1990); **Ա. Սարգսեան**, Արդինի-Մուսասիրի տեղորոշման շուրջ, «Մերձարև և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» (յետայսու՝ ՄՄԱԵԺ), հտ. XIX, Եր., 2000, էջ 140-152:

3 Ինչպէս նշել ենք նախորդ աշխատանքում (**Ա. Յ. Յակոբեան**, Հայ ժողովրդի էթնոհամալիրման գործընթացի պատմա-մշակութային առանձնայատկութիւնները, «Վէմ» համահայկական հանդէս, Ե(ԺԱ) տարի, 2013, հտ. 1/41/, էջ 36, ծխթ. 8), մենք հետևում ենք Յովհ. Կարազեօզեանին, ով նշում է՝ «վերջին շրջանում գիտութեան մէջ առաւել տարածուած **ուրարտերէն, ուրարտական, ուրարտագէտ** եզրերի փոխարէն... **բիաիներէն, բիաինական, բիաինագէտ** եզրերի» օգտագործման իրաւացիութիւնը, որը հեշտացնում է «թէ գիտութեան, թէ առօրեայ մտածողութեան մէջ **Ուրարտու, ուրարտական** եզրերի բազմիմաստութեան ընկալումը (օրինակ, շատ բնագրերում **Ուրարտու (Ուրաշտու)** և **Արմենիա (Արմինա)** եզրերը փոխարինում են իրար, այնինչ ոչ մի տեղ չունենք **Բիաինէլէ – Արմենիա** գուգահեռ)»: Հմմ. **Յ. Կարազեօզեան**, Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում, հտ. I, գիրք 1. Սեպագիր տեղանուններ (Արարատում և յարակից նահանգներում), Եր., 1998, էջ 10, ծխթ. 10: Իսկ «վաղ Ուրարտուի» տարածքային և բովանդակային ընդգրկման ճշգրտման մասին հմմ. մեր նշուած աշխատանքում, էջ 45-49, 61-62:

4 Տեն **Անանուի (է դար)**, Աշխարհացոյց, Գիտա-քննական բնագիր **Ա. Յակոբեանի**, «Հանդէս աստօրեայ», ՃԻԷ տարի, Վիեննա-Եր., 2013, էջ 35-194:

5 Յատկապէս դա վերաբերում է ասորեստանեան բնագրերի **Մուծածիք** (բիաինական բնագրերում = **Արդինի**) երկրանունը «Աշխարհացոյց»-ի **Մոթոթթող-անք** գաւառանունան հետ (Կորձայք նահանգի հարաւ-արևելքում) համադրելու հնարաւորութեան ճշտմանը («Բ – Լ-Ղ հնչիւնամփոխութեամբ. անուանաձևի կրկնուող վանկի համար հմմտ. **Բաղէշ – Բաղաղէշ**, սեպագրում **Ուայայիս**, իսկ **Ծ – Թ** հերթագայութեան համար՝ **Կեթիկ գաւառ – Կեծան ուշմիջնադարեան գաւառակ**)», տեն **Ա. Յ. Յակոբեան**, Հայ ժողովրդի էթնոհամալիրման գործընթացի պատմա-մշակութային առանձնայատկութիւնները, էջ 46-47, ծխթ. 56: Հմմ. նաև **Ա. Յակոբեան**, Պատմա-աշխարհագրական և վիճակագրական հետազօտութիւններ (Արցախ և Ուտիք), Վիեննա-Եր., 2009, էջ 290-293 (Կորձայքի **Ջաւ գաւառ**-ի անուան և տեղի վերականգնման մասին), էջ 418-420 (Բասորպետա-Պարսպատունիք և **Ֆաւնիտիս-Ջրաւնիտիս-Ջարևանդ** համադրումների մասին), ինչպէս նաև ներդիր 4 («Աշխարհացոյց»-ի հեղինակի օգտագործած Մեծ Հայքի քարտէզ-սխեմայի վերակազմութեան փորձ (Ուտիք, Արցախ, Սինիք աշխարհների հատում)»):

# 1. Սարգոն Բ-ի արշաւանքի սկզբնական փուլը

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հ (ԺԲ) քարի, թիվ 1 (45) հունվար-մարտ, 2014

Վէմ համահայկական հանդես

Իր թագաւորութեան ութերորդ տարում (714 թ.) Սարգոնը մեծաթիւ բանակով «Դու՛ուզու» ամսին (*var.* Դումուզի = Յունիս-Յուլիս<sup>6</sup>) դուրս եկաւ Կալխու մայրաքաղաքից (սոր ժամանակների՝ Նիմրուդ՝ Տիգրիսի Մեծ Զաք վտակի գետաբերանից մի փոքր հիւսիս, արդի Էլ-Խիդիր բնակավայրի մօտ) և արևելեան ուղղութեամբ շարժուեց դէպի իր կրտսեր դաշնակից Մաննայի թագաւորութեան տարածքը (բիւսիական բնագրերում նրա անուանաձևն է՝ **Մանա**): Ամմիջապէս գետանցելով Մեծ («Վերին») Զաքը՝ երեք օր անց նրա բանակն «ինչպէս առուի վրայով» անցաւ նաև Փոքր («Ներքին») Զաքը, ապա՝ «Կուլլար լեռնանցքը՝ բարձր լեռան Լուլումու երկրի, որին կոչում են Զամուա», և զօրքի ստուգատես կազմակերպեց «Սումբու մարզում» (*var.* Սումբի): Բնական է՝ վերջինը նոյնպէս դեռ Ասորեստանեան երկրում էր. նրանից սկսած և Դիալայի հովտով դէպի հարաւ ընկած ցեղագաւառներն ասորեստանեան բնագրերն ամփոփում էին Նամրու երկրանուան տակ<sup>8</sup>:

Այս առաջին հատուածի առիթով անհրաժեշտ է նշել, որ բոլոր ուսումնասիրողները ասսուրագիտական վաղագոյն գործերին բնորոշ մօտաւոր պատկերացումներից եկող մի ամանդոյթով՝ բանակի երթուղին Կալխուից գծում են հարաւ-արևելեան ուղղութեամբ, դէպի արդի Քիրքուկ (հնագոյն՝ Առապլաս), որից յետոյ լոկ՝ դէպի արևելք, մինչև արդի Սուլեյմանիա՝ զօրահանդէսի վայրը դնելով վերջինիս շրջանում<sup>9</sup>. ընդ որում յղում է կատարում Սարգոնի յիշատակած **Կուլլար** լեռան հետ (որն իբրև Զամուա երկրի լեռ յիշատակում էր նաև Սալմանասար Գ-ն<sup>10</sup>) «Փոքր Զաքի ոլորանի» շրջանում գտնուող **Կուլլարա-դաղ** լեռնանուան համահունչ լինելուն<sup>11</sup>:

Սակայն ուշադիր դիտարկելով արդի քարտէզագրական նիւթը, մասնաւորապէս՝ Խորհրդային բանակի Գլխաւոր շտաբի 1:200000 մասշտաբով քարտէզները (դրանք այս պահին առաւել հասանելին են համացանցում<sup>12</sup>. յետայսու՝ «2 կմ-անոց»), տեսնում ենք, որ **Կուլլար** լեռնաշղթան (միւս անունով՝ Սարմաբանդ) իր 1611, 1875 և 1583 մ բարձրութեամբ գագաթներով ու վերջինիս արևելեան լանջի **Կուլեր** ոչ մեծ գիւղով ընկնում է մօտ 12 կմ դէպի հիւսիս Սուլեյմանիայից և մօտ 16 կմ հարաւ՝ Փոքր Զաքի մեծ ոլորանից (արդի Դոկան արհեստական լճով), որի արևելեան հատուածում հարաւից նրա մէջ է թափում ամենամեծ ձախ վտակ Կալա-Չիլանը:

6 Հմմ. АВИИУ, 1951, N 2, с. 334, прим. 2.

7 АВИИУ, 1951, N 2, с. 321, § 49; ՀԺՊ քրեստոմատիա, էջ 24:

8 Տե՛ս օր.՝ **Ս. Տ. Երեմեան**, Ուրարտու պետութիւնը. 860-590 թթ. մ. թ. ա. (քարտէզ), Եր., 1980; **Н. В. Арутюнян**, Топонимика Урарту, Ер., 1985, с. 150.

9 Տե՛ս օր.՝ Պաուլ Զիմանսկու պատրաստած՝ ռազմուղիների 8-9 տարբերակ ամփոփող քարտէզում (**P. Zimansky**, Urartian geography and Sargon's Eighth Campaign, p. 6):

10 Տե՛ս **A. K. Grayson**, Assyrian Rulers of the Early First Millenium B. C. II (858-745 B. C.) /RIMA, Vol. 3/, Toronto, Buffalo, London, 1996, p. 36, 40, 45, 52, 61, 65, 75.

11 Տե՛ս, օր.՝ **Ն. Ադոնց**, Հայաստանի պատմութիւն. Ակունքները X-VI դդ. մ. թ. ա., Ֆրանսերէնից [Paris, 1946] թարգմանեց **Վ. Պ. Սեդրոսեանը**, Եր., 1972, էջ 104:

12 <http://loadmap.net/>. Այս կայքը տրամադրում է նաև Գլխաւոր շտաբի 1:100000 մասշտաբով քարտէզները, սակայն առայժմ՝ միայն Զարասպի լեռնագանգուածից հիւսիս ընկած շրջանների (յետայսու՝ «1 կմ-անոց»):

Սրանից պարզ է դառնում, որ Սարգոնի ռազմադին անհրաժեշտ է գծել ոչ թե դէպի Քիրքուկ, որի դէպքում Մեծ Զար – Փոքր Զար միջակայ հատուածը կազմում է լոկ 60 կմ, այլ գրեթէ ուղիղ դէպի արևելք, որի դէպքում նոյն միջակայքը մինչև Փոքր Զարի՝ հիւսիսից արևմուտք շրջուող ոլորանի անկիւնը (մեծ ոլորանից 15 կմ հարաւ) կը կազմի 135 կմ, ինչը լիովին համապատասխանում է եռօրեայ կանոնաւոր դաշտային ռազմերթի երկարութեանը (օրական՝ մօտ 40 կմ):

Այսպիսով, Սարգոնի բանակը երկրորդ մեծ գետանցը պէտք է կատարած լինէր Փոքր Զարի հոսանքի նշուած անկիւնում, որից յետոյ պիտի անցնէր հարաւ–արևելքից նրա մէջ թափուող փոքրիկ Տարին ձախ վտակի հովտով դէպի վեր, ապա՝ քարտէզում Մերգէ–Պան անունը կրող ջրբաժան լեռնանցքով (1225 մ, արևմուտքից ու արևելքից նրան յարող գագաթներն ունեն 2624 և 1875 մ բարձրութիւն) իջնէր Օբարաչայ գետակի հովիտը (այսօր այդպէս անցնում է Միրգա–Ռուստան – Սուլէյմանիա ատոմայրուղու մի ճիւղը): Այն արդէն Դիալայի վտակներից է (ի դէպ, ամենահիւսիսային ակունքն ունեցողը, որն իր ստորին հոսանքում, Սուլէյմանիայից հարաւ, կոչւում է Տանջարօ) և այդ տեղում զօրահանդէս անցկացրած Սարգոնի կողմից վերագրուած է Սումբու հարաւային մարզին:

Սարգոն Բ-ն գրում է, որ այդ վայրից իր արշաւանքն ուղղել է «դէպի լեռների խորքը», «Զիկիրտուի և Անդիայի վրայ»<sup>13</sup>: Իրականում, մինչ նշած երկրները հասնելը նա դեռ պիտի երկար ճանապարհ անցնէր Մաննայի ու նրա հարաւ–արևելեան հարևան երկրների տարածքով: Սրանից, թերևս, պէտք է ենթադրենք, որ արքայի ուղիղ պնդումն արտացոլում է հէնց տուեալ օրուայ **անմիջական** իրողութիւնը, այն է՝ իր երկրի հիմնական շրջանների սահմանն արդէն հատող զօրքին տրուած կոնկրետ հրամանի «նախաբանում» արշաւանքի վերջնական նպատակակէտի յիշատակումը, որը դեռևս Ուրարտուն չէր: Դա կարելի է բնական համարել, քանի որ, ինչպէս յայտնի է Սարգոնի ուրիշ վիմագրերի հաղորդումներից, նախորդող տարիներին (իշխանութեան երրորդ, վեցերորդ և եօթերորդ) նա երեք ռազմերթ էր կատարել դէպի Զիկիրտու, Անդիա և դրանց հարևան ոչ մեծ երկրներ, որոնք համարում էին Ասորեստանի կրտսեր դաշնակից Մաննային ենթակայ թագաւորութիւններ կամ անգամ մարզեր, որ պարբերաբար ապստամբում էին վերջինիս դէմ ու սատարում «թշնամի» Ուրարտուի արքայ Ռուսայի (Ուրսայի) նկրտումներին<sup>14</sup>:


«Դէպի լեռների խորքն» ուղղուած ճանապարհը նկարագրում է իբրև երկու բարձր և ծառաշատ լեռների միջև (կոչուած՝ Նիկիպպա և Ուպա) սեղմուած մութ կիրճով ընթացող, որով հոսող Բույա գետը բանակը գետանցել է 26 անգամ, ապա բարձրանալով **Սիմիրրիա** կոչուած լեռը (այսինքն՝ նրա լեռնանցքը)՝ անցել Մաննա երկրի Սուրիկաշ մարզը, ուր հոսող 2 գետերից մէկը **Արատտան** էր<sup>15</sup>: Վերջինս համապատասխանում է հայկական աղբիւրների (Սեբիոս, Թովմա Արծրունի ևն<sup>16</sup>) **Վարարատ**

13 Տող 14; АВИИУ, 1951, N 2, с. 321, § 49; ՀԺՊ քրեստոմատիա, էջ 24:

14 Տե՛ս АВИИУ, 1951, N 2, с. 316–317, § 46; N 3, с. 209–210, § 54:

15 Տե՛ս նոյն տեղում, N 2, с. 321–322, § 49; ՀԺՊ քրեստոմատիա, էջ 24–25:

16 Տե՛ս **Սեբէոսի եպիսկոպոսի** Պատմութիւն, Չորրորդ տպագրութիւն, բաղդաստոյթեամբ ձեռագրաց, հանդերձ առաջաբանի և ծանօթագրութեամբք ի ձեռն **Ստ. Մալխասեանց**, Եր.,



ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՎԷ՛ն հասնահայկական հանդես 2 (ԺԲ) րարի, թիվ 1 (45) հունվար-մարտ, 2014

գետին (նաև՝ «գաւառ»)՝ հարաւից Ուրմիա լիճ հոսող ամենաերկարին<sup>17</sup>, արդի անունը՝ Զաղաթու կամ Զեռինեհ, հետևաբար՝ պարզ է, որ Սուրիկաշն ընդգրկել է հէնց նրա վերնահովիտը: Այդու՝ Զաղաթու-Զեռինեհին զուգահեռ հոսող և ջրառատ Խոռխոռէ վտակն էլ պիտի համադրուի Սարգոնի յիշատակած սուրիկաշեան Ռապպա գետի հետ:

Բույայի գետահովտի նկարագրութիւնից երևում է, որ այն պիտի դիտարկել իբրև ամենատղիղ ճանապարհը, որով Սումրուի գորահանդէսի վայրից հնարաւոր էր հասնել Զեռինեհի ջրբաժանին: Տուեալ պայմանին լիովին բաւարարող աշխարհագրական դիրք ունի արդի քարտէզների Շիլեր գետը (ստորին հոսանքում՝ Սիվայլ, վերինում՝ Կորիա և Նոու-Խուվան կոչուող), որն սկիզբ է առնում Զեռինեհի հովիտ տանող Նոու-Խուվան լեռնանցքից (1859 մ)՝ արդի Իրաքի Հանրապետութեան հիւս. կէսի ամենաարևելեան կէտից: Շիլերը շուրջ 85 կմ հոսում է գրեթէ ուղիղ գծով դէպի արևմուտք (ի տարբերութիւն զուգահեռ վտակների, որոնք մեծ ոլորաններ են անում) և միախառնում վերը նշուած՝ Փոքր Զաքի հարաւային Կալա-Չիլան վտակին (ի դէպ, ջրառատութեամբ չզիջելով նրան): Ընդ որում՝ գետկիցը հէնց Կոլլար լեռնաշղթայի հարաւային ցածրադիր մասերի արևելեան թիկունքում է, այդ լանջի Կոլեր գիւղից 2 կմ հեռու:

Այսպիսով, **Սիմիրիա** անունն, ամենայն հաւանականութեամբ, պէտք է վերագրել Նոու-Խուվան լեռնանցքի հիւսիսում բարձրացող Քուհե-Սոէկինի կոչուող լեռանը (2232 մ. նրանից 5 կմ արևմուտք ընկած Սուրեան լեռնագագաթի (2312 մ) արևմտեան լանջի տակ գտնուող լեռնանցքով ևս հնարաւոր է անցնել Զեռինեհի մի ձախ վտակի վերնահովիտ, սակայն այն շատ աւելի բարձր է (2067 մ), բարձունք տանող ճանապարհն էլ՝ մեծ թեքութիւններով ու պակաս յարմարաւետ: Իսկ Բույայի ավերով ձգուած 26 գետանցումներով ճանապարհը հարաւից ու հիւսիսից ստուերած Ուպա և Նիկիպպա լեռները զուտ ենթադրաբար կարող ենք համադրել համապատասխանաբար՝ Շիլերի աւազանը Կալա-Չիլանի հովտից բաժանող Զերել-Սարի-Մուրդական լեռնագագաթի (1589 մ) և Փոքր Զաքի հիւսիս-արևելեան Բանէ վտակի աւազանից բաժանող Զերել-Ռոտ լեռնագանգուածի (2134 մ) հետ<sup>18</sup>: Ի դէպ, Բանէի աւազանում և Փոքր Զաքի

1939, գլ. Թ, էջ 39; Պատմութիւն **Սերէոսի**, Աշխատասիրութեամբ **Գ. Վ. Աբգարեանի**, Եր., 1979, էջ 77; **Թովմա Արծրունի և Անանուն**, Պատմութիւն տանն Արծրունեաց, Քննական բնագիրը, առաջաբանը և ծանօթագրութիւնները **Մ. Հ. Դարբինեան-Մելիքեանի**, Եր., 2006, գլ. Բ.գ, էջ 98, գլ. Գ.իթ, էջ 288:

17 Տե՛ս **V. Minorsky**, Roman and Byzantine Campaigns in Atropatene, – Iranica: Twenty Articles, Tehran, 1964, p. 89–91; **Բ. Յ. Յարութիւնեան**, Հայ Արշակունիների ձեռական իշխանութեան կալուածքների հարցի շուրջը, «ՊԲՀ», 1988, N 4, էջ 45; **Յ. Խորիկեան**, Ատրպատականի և Մեծ Սարաստանի մ. թ. ա. I – մ. թ. I դարերի պատմական աշխարհագրութեան մի քանի հարցերի շուրջ, «Հանդէս ամսօրեայ», ՃԻՋ տարի, Վիեննա-Եր., 2012, էջ 186: Հմմ. հետևեալ քարտէզում՝ **Բ. Յ. Յարութիւնեան**, Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբիւրների, Եր., 2001, ինչպէս նաև՝ **S. Parpola**, Neo-Assyrian Toponyms, Neukirchen-Vluyn, 1970, p. 24; **Յ. Կարազեղեան**, Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում, էջ 309:

18 Այս վերջին՝ **Նիկիպպա** լեռնանունը, թերևս, կարող է համադրուել Աշշուրնաճիրապալ Բ-ի (884/883–859) «Տարեգրութեան» մէջ յիշատակուող՝ Զամուայի Նիժիր լեռան հետ, «որը լուլլուները կոչում են **Կինիբա**» (առաջին բաղաձայների դրափոխութեան ենթադրութեամբ). տե՛ս **A. K. Grayson**, Assyrian Rulers of the Early First Millenium BC. I (1114–858 BC) /RIMA, Vol. 2/, Toronto, Buffalo, London, 1991, p. 204, 245. Հմմ. **M. Streck**, Gebiet der heutigen Landschaften Armenien, Kurdistan und Westpersien nach den babylonisch-assyrischen Keilinschriften, «Zeitschrift



յարակից հատուածի հովտում (Սերդէշտ՝ ըստ ամենայնի՝ ուշագրաւ անունը կրող քաղաքի շրջակայքով), մեծ հաւանականութեամբ, տեղորոշում է Մաննայի հարաւ-արեւմտեան և Ասորեստանին սահմանակից Շուրդիրա մարզը (այլ ընթերցմամբ՝ Պադդիրա) կամ «Շուրդիրա քաղաքի շրջանը», որը մի քանի յիշատակումներ ունի ասորեստանեան տարբեր արքաների վիմագրերում (սկսած 859–824 թթ. իշխած Սալմանասար Գ-ից)<sup>19</sup>:

Սիմիրրիա լեռան վրայ դրած ճամբարից Սարգոնն իջաւ «Սուրիկաշ՝ մաննացիների մարզը, որը հարևան էր Կարալլուին և Ալլաբրիային»։ այդ տարածքում նա անցաւ 7 լեռներ (անուանուած են վեցը՝ Սինախուլգի, Բիրուատտի, Տուրտանի, Սինաբիր, Ախշուրու, Սույա), 2 գետեր (Ռապպա, Արատտա) և հասաւ նրա սահմանամերձ Սինիխիսի ամրոցը, որտեղ իր մայրաքաղաք Իզիրտուից դուրս գալով՝ նրան հանդիպեց Մաննայի թագաւոր Ուլլուտունուն, բերելով առատ տուրքը և համբուրելով Սարգոնի ոտքերը<sup>20</sup>։ Կարալլուի և Ալլաբրիայի յիշատակութիւնն ամրապնդում է Սուրիկաշ մարզը Զաղաթու–Ջեռինեհի վերնահովտում տեղադրելու տարբերակը, քանի որ այդ երկրները մեծ հաւանականութեամբ տեղորոշում են նշուած գետի ջրբաժանից հարաւ, Դիալա գետի՝ վերին հոսանքում Սիրվան կոչուող օժանդակի միջնահովտի աջ (հիւսիսային) վտակների աւազաններում (իսկ Սիրվանի վերին աւազանը զբաղեցնում էր Ալլաբրիային հարևան Պարսուաշ երկիրը)<sup>21</sup>։ Ընդ որում՝ Կարալլուն ընկնում էր աւելի արևմուտք, աւելի մօտ Ասորեստանի կենտրոնական շրջաններին, և բազմաթիւ յիշատակումներ ունի ասորեստանեան մի քանի արքաների վիմագրերում<sup>22</sup>։ Ինչ վերաբերում է Սինիխիսի ամրոցին, ապա հաշուի առնելով Սիմիրրիայի լեռնանցքից յետոյ 7 լեռներ ու 2 գետեր անցնելու հանգամանքը՝ այն պէտք է տեղորոշել Սուրիկաշի հեռաւոր՝ արևելեան շրջանում, այսինքն՝ Ջեռինեհի աջ (արևելեան) Խոռխոռէ վտակի վերնահովտում։ Ըստ այդմ՝ ստիպուած պիտի լինենք մեծապէս վերապահել Սինիխիսի միւս տեղորոշումները և յատկապէս՝ համադրումը Սիմախ լեռնանուան հետ<sup>23</sup>, որը բաժանում էր Բանէի հովիտը կենտրոնական Մաննայով հոսող Թաթաւա գետի աւազանից։

für Assyriologie und verwandte Gebiete», XIV, 1899, S. 276–277; E. Forrer, Die Provinzeinteilung des assyrischen Reiches, Leipzig, 1921, S. 43; И. М. Дьяконов, История Мидии от древнейших времен до конца IV века до н. э., Москва–Ленинград, 1956, с. 156.

19 Տե՛ս A. K. Grayson, Assyrian Rulers of the Early First Millenium B. C. II (858–745 B. C.), p. 40, 70, 82; АВИИУ, 1951, N 2, с. 301, § 34; N 3, с. 238, § 73: Տեղորոշման մասին մանրամասն տե՛ս Ե. Գրեկեան, Մանայի թագաւորութեան վարչա-քաղաքական միաւորների և դրանց տեղադրութեան շուրջ, «ՄՄԱԵԺ», հտ. XIX, Եր., 2000, էջ 158, 170: Առիթն օգտագործում եմ՝ ջերմ երախտագիտութիւնս յայտնելու հեղինակին՝ ինձ հասու գրականութիւնը հարստացնելու և կարևոր խորհրդատուութիւնների համար:

20 Տե՛ս АВИИУ, 1951, N 2, с. 322, § 49; ՀԺՊ քրեստոմատիա, էջ 25–26:

21 Հմմ., օր.՝ Ս. Տ. Երեմեանի վերը նշուած քարտէզում (Ուրարտու պետութիւնը. 860–590 թթ. մ. թ. ա.): Այս պատճառով պէտք է վերապահել Ալլաբրիայի մնացեալ տեղորոշումները, որոնց մասին տե՛ս Ե. Գրեկեան, Մանայի թագաւորութեան վարչա-քաղաքական միաւորների և դրանց տեղադրութեան շուրջ, էջ 157, 160, 169:

22 Նրա տարածքում, Սիրվանի միջին հոսանքի հարաւային ափին վերջերս յայտնաբերուած մի կարևոր վիմագրի մանրամասն ուսումնասիրութիւնը տե՛ս G. Frame, The Inscription of Sargon II at Tang-i Var, «Orientalia», Vol. 68/1 (1999), p. 31–57 + 18 tab.

23 Տե՛ս, օր.՝ Ս. Տ. Երեմեանի վերը նշուած քարտէզում կամ Ե. Գրեկեան, Մանայի թագաւորութեան վարչա-քաղաքական միաւորների և դրանց տեղադրութեան շուրջ, էջ 157, 160:

Մինիխինից դուրս գալով՝ Սարգոնն անցավ Մաննայի հարավային հարևան Ալլաբրիա երկիրը և մտավ նրա Լատաշէ ամրոցը՝ «Լարուետէ մարզի գետի վրայ»<sup>24</sup>: Ամենայն հաւանականութեամբ, այն գտնուում էր Սիրվանի աջ (հիւսիսային) Սեպիր վտակի (ստորին հոսանքում՝ Ռուխանէ և Աբե-Գերդէլան կոչուող. դա, թերևս, հէնց «Լարուետէ մարզի գետն» էր) վերնահովտում կամ միջնահովտում՝ ընկած Խոռխոռէի հետ ջրբաժան Սոլթան լեռնաշղթայից հարաւ, որի լեռնանցքներով էլ անցել էին ստորեւտանցիները: Իսկ Սեպիրի ստորին հովիտը՝ հիւսիս-արևմուտքից նրան միացող Չեմե-Գարան (վերին հոսանքում՝ Չեմե-Չեմարէ) խոշոր վտակի աւազանով հանդերձ (նոյն կերպ՝ սահմանակից Զաղաթու-Ջեռի-նեհի վերնահովտին), ըստ ամենայնի, պէտք է վերագրել արդէն Կարալ-լուին, ուր Սարգոնը 714 թ. չմտավ (բայց յաջորդ տարի աւերեց այդ ապստամբած երկիրը հիմնաւորապէս): Լատաշէում ստանալով Ալլաբրիայի Բելապալիդդինա արքայիկի տուրքը՝ Սարգոնն անցավ նրան արևելքից հարևան, Սիրվանի վերնահովտի Պարսուաշ երկիրը (այն, ըստ արքայական այլ վիմագրերի, նախկինում վերածուել էր Ատրեստանի նահանգի՝ Նիկուր կենտրոնով, որը, թերևս, արդի Սանանդաշ քաղաքի շրջանում էր). այստեղ արքային իրենց հնազանդութիւնը վերայայտնեցին ու «ծանր տուրքերը» բերեցին «Նամրու, Սանգիբուտու, Բիթ-Աբդադանի երկրների և մեղացիների հզօր երկրի պետերը»<sup>25</sup>:

Այստեղ բնագիրը բերում է նաև մարական և էլամական 24 երկրների մանրամասն ցուցակը (Էլլիպի, Բիթ Կապսի, Սապարդա, Սիբուր ևն)՝ իրենց արքայիկների անուններով. այդ տեղանունների և անձնանունների մանրամասն քննութիւնը, համադրելով նախորդ տարուայ արշաւանքի ժամանակ յիշատակուած անունների հետ, կատարել է Ի. Դեակոնովը<sup>26</sup>: Մեզ հետաքրքրող խնդիրների համատեքստում տեղին է անդրադառնալ դրանցից մէկին՝ նաև Ք. ա. 713-ին յիշատակուած **Անդիրպատտիանու-ին**<sup>27</sup> (Մաշդակկու, (var. Պարտուկկու արքայիկով), որը հետազօտողների կողմից ժամանակին համադրուել է հետագայում շատ յայտնի դարձած **Ատրպատական-Ատրոպատենէ** երկրանունն հետ<sup>28</sup>: Ի. Դեակոնովը այդպիսի համադրման փոխարէն ընդունելի է համարում դեռ Ստրաբոնից եկող մտայնութիւնը, ըստ որի՝ վերջին երկրանունը ծագում է Աղեքսանդր Մակեդոնացու ժամանակակից Ատրոպատէս սատրապի անձնանունից<sup>29</sup> («սուրբ կրակի պահպանած»)՝ իրանական ստուգաբանութեամբ<sup>30</sup>: Սակայն հարկ է նկատի ունենալ, որ Անդիրպատտիանու – Ատրոպատենէ համադրումը վերապահելու համար կարևոր պատճառ է եղել նաև դասական ժամանակների Ատրպատականի կենտրոնական շրջաններում՝

24 АВИИУ, 1951, N 2, с. 322, § 49; ՀԺՊ քրեստոմատիա, էջ 26:

25 Տե՛ս նոյն էջերը:

26 Տե՛ս **И. М. Дьяконов**, История Мидии от древнейших времен до конца IV века до н. э., с. 213-215: Հմմ. նաև **И. Н. Медведская**, Древний Иран накануне империй, С. Петербург, 2010.

27Ք. ա. է դ. մի բնագրում յիշատակուած է նաև Անդարպատի[անու] ամրոցը (տե՛ս **И. М. Дьяконов**, История Мидии, с. 261-262):

28 Տե՛ս, օր.՝ **J. A. Knudtzon**, Assyrische Gebete an den Sonnengott für Staat und königliches Haus aus der Zeit Asarhaddons und Asurbanipals, Leipzig, 1893, B. II, S. 127.

29 Տե՛ս **Strab.**, XI, XIII, 2; **Ստրաբոն**, Քաղեց և թարգմանեց **Հ. Աճառեան**, Եր., 1940, էջ 47:

30 Տե՛ս **И. М. Дьяконов**, История Мидии, с. 214, 221, 262.



Ուրմիա լճից արևելք և Սոհենդ լեռնազանգուածից հարաւ (Գագակա-Գանձակ և Փրասապա-Շիզ-Գայշաւան մայրաքաղաքներով<sup>31</sup>) Զիկիրտու երկրի տեղորոշումը: Իսկ վերջինիս տարածքը Ուրմիայից հարաւ-արևմուտք դիտարկելու դէպքում (տես ստորև) անհրաժեշտութիւն է առաջանում վերատին անդրադառնալ Անդիրպատտիանու մարական ցեղագաւառի իրական տեղորոշման խնդրին:

Պարսուաշից մեկնելով՝ Սարգոնն անցաւ «մաննացիների երկրի Միսսի մարզը» և մտաւ Սիրդակկա կոչուած նրա ամրոցը (յաջորդ երկու հատուածներում տեղանուան տարբերակն ուրիշ է՝ Զիրդիակկա), ուր իրեն նորից հանդիպած Ուլլուսունուին ու միւս մաննացիներին արդէն խոստացաւ ջախջախել թշնամի Ուրարտուին. այստեղ նա իբրև թէ առաջին անգամ ստացաւ նաև «մաննացիների և մեդացիների երկրների միջև ճանապարհներն արգելափակող» հարևան Գիզիլբունդա երկրի ցեղերի (իրենց Ապպատար և Կիտպատ [var. Կիտպատտիա] «քաղաքների» պետերով) հնագանդութեան հաւաստիացումներն ու տուրքերը՝ նրանց դնելով Պարսուաշի իր նահանգապետի ենթակայութեան տակ<sup>32</sup>:

Այս բոլոր նկարագրութիւնների երկրաչափական պարզ դասաւորումից երևում է, որ անհրաժեշտ է վերապահել թեթևօրէն շրջանառուող տեղորոշումները և Մաննայի Միսսի մարզը հաստատապէս դիտարկել Պարսուաշից (այսինքն՝ Սիրվանի վերնահովտից) դէպի հիւսիս և Սուրիկաշից (այսինքն՝ Զաղաթու-Զեռինեհի վերնահովտից) արևելք ընկած տարածքում: Բարտէզով այդ պայմանին բաւարարում է Սեֆիդաուդ - Կըզըլ-Ուզէն գետի՝ աշխարհագրական ընդունուած անուանակարգով հիմնական (ո՛չ ամենահարաւային) օժանդակի վերնահովտը: Ընդամին՝ նրան հարաւ-արևելքից յարող Թելվար հարաւային ջրառատ օժանդակի վերնահովտը կարող ենք լիովին համապատասխան համարել Գիզիլբունդա երկրի նկարագրութեանը, որն այդպէս Պարսուաշին էլ հարևան է ստացում արևելքից: Միսսիի այսպիսի տեղորոշումից յետոյ հնարաւոր է նրա Զիրդիակկա-Սիրդակկա ամրոցը որոշակի հաւանականութեամբ համադրել Սեֆիդաուդի վերին աջ (հարաւային) վտակներից մէկի ափին գտնուող Սերդէկ գիւղանուան հետ (տես մեր յօդուածին կից քարտէզում):

Ի դէպ, Մաննայի Միսսի մարզի տեղորոշումը Սեֆիդաուդի վերնահովտում անուղղակիօրէն հաստատում է նաև պատմահայր Հերոդոտոսի մի ուշագրաւ վկայութեամբ, ըստ որի՝ «Արաքս գետը բխում է մատինենների երկրից, որտեղից և Գիւնդէս գետը [=Գիալա], որը Կիւրոսը բաժանեց 360 ջրանցքների»<sup>33</sup>: Ինչպէս արդէն նկատուած է, տուեալ դրուագի «Արաքս»

31 Դրանց տեղորոշումների տարբերակների մասին տես **Յ. Խորիկեան**, Ատրպատականի և Մեծ Սարատասի մ. թ. ա. I – մ. թ. I դարերի պատմական աշխարհագրութեան մի քանի հարցերի շուրջ, էջ 178-187:

32 Տես АБИИУ, 1951, N 2, с. 322-323, § 49; ՀԺՊ քրեստոմատիա, էջ 26-27:

33 Her. I, 202; Հերոդոտոս, Պատմութիւն ինը գրքից, Թարգմ. Ս. Կրկեաշարեանի, Եր., 1986, էջ 83: Մէկ այլ՝ Արքայական ճանապարհի նկարագրութեան հատուածում պատմիչը Գիւնդէսի մասին գրում է. «Այս Արմենիայից ճանապարհը մտնում է Մատինէնէ... Այս երկրի միջով հոսում են չորս նաւարկելի գետեր... Այդ գետերից առաջինը Տիգրիսն է. երկրորդը և երրորդը համանուն են, բայց նոյն գետերը չեն և նոյն վայրից չեն բխում. քանզի յիշեալ գետերից առաջինը [=Մեծ Զար] բխում է Արմենիայից, իսկ երկրորդը [=Փոքր Զար]՝ Մատինէնէից: Չորրորդ գետը կոչոււմ է Գիւնդէս, որը Կիւրոսը բաժանել էր 360 ջրանցքների [=Գիալա]» (V,

գետանուան տակ վաղ անտիկ ասանդոյթում ընկալուել է Սեֆիդոյդ գետը (ուշ անտիկ շրջանում՝ Ամարդոս)<sup>34</sup>, իսկ «Մատինէն» երկրանուան տակ՝ այս դէպքում հէնց ուշ Մաննան: Ստրաբոնը և այլ անտիկ հեղինակներ Ուրմիա լիճը ևս անուանում էին «Մատինէն»<sup>35</sup>:

Մաննայի հարաւ-արևելքում գտնուած Զիրդիակկա-Սիրդակկա ամրոցից մեկնելով՝ Սարգոնը մի սրընթաց և մեծ անցում կատարեց դէպի այդ երկրի հիւսիսային շրջանը՝ Զիկիրտու և Անդիա ներխուժելու համար (բնագրում նշուած է «30 բերու» թիւը, որը կազմում է մօտաւորապէս 180–210 կմ<sup>36</sup>), ինչպէս և այն, որ ճանապարհին անցել է «մաննացիների երկրի, Բիթ-Կապսիի և հօր մեղացիների երկրի միջով»<sup>37</sup>: Հաշուի առնելով Միսսիի վերը ձշտուած տեղորոշումը՝ կարելի է մտածել, որ յիշատակուած Բիթ-Կապսի ցեղագաւառը գտնուել է Զաղաթուի աջ (արևելեան) խոշոր վտակ Սարուկի հովտում, որի արևելակողմում բարձրացող լեռնազանգուածը (Սեֆիդոյդի հետ ջրբաժան) կրում է համադրման առումով գուցէ և բաւականին ուշագրաւ Բուհե-Կաֆելան անունը:

## 2. Զիկիրտու, Անդիա և Ուիշդիշ երկրների տեղորոշման խնդիրը

Սարգոնի բանակն արեց այդ մեծ, շուրջ 200 կմ-անոց անցումը և հասաւ Մաննայի արդէն հիւսիսային շրջաններից մէկում գտնուող Պանգիշ ամրոցը, «որը հիմնուած էր Զիկիրտու և Անդիա երկրների դէմ պաշտպանութեան համար, կառուցուած զոյգ մարզերի դէմ՝ փախչողներին բաց չթողնելու և թշնամու ոտքերը յետ պահելու համար». այս յենակէտն անհրաժեշտ չափով ամրացնելուց ու պարեն կուտակելուց յետոյ («հրամայեցի բերել այնտեղ գարի, իւղ և գինի») Սարգոնն անցաւ Իշտարաուրա գետն (ըստ այսմ՝ սահմանային), և ներխուժելով Զիկիրտու երկրի Աուկանէ մարզը, իր խօսքերով՝ առանց բարդութիւնների ջախջախեց նրա Մետատտի արքայիկի հրամանով Ուաշդիրիկկու «դժուարին սարի» լեռնանցքում պաշտպանութիւն կազմակերպած զօրքը, որից յետոյ գրաւեց նրա անպաշտպան թողնուած Պարդա մայրաքաղաքը, ապա նաև՝ պարիսպներով ամրացուած 12 քաղաքներ (թուարկուում են 13-ը՝ Իշտաիպպա, Սակտատուշ, Նանգա, Աուկանէ, Կարանի, Գուռուտուպա, Ռակսի, Գինդակրիկկա, Բարունակկա, Ուբարարա, Սիտերա, Տաշտամի

52; **Հերոդոտոս**, էջ 307): Հմմ. նաև **Her.** I, 189–190 (**Հերոդոտոս**, էջ 77–78), ինչպէս նաև Ստրաբոնի մօտ (**Strab.** XI, XIV, 13; **Ստրաբոն**, Քաղեց և թարգմանեց **Լ. Աճառեան**, էջ 63), որը հետևում է Հերոդոտոսին:

34 Տե՛ս **А. А. Акопян**, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ер., 1987, с. 76; **Յ. Խորիկեան**, Արեւմտեան Պարսկաստանի XVIII սատրապութեան մատինէնների տեղադրութեան շուրջ, – ՄՄԱԵԺ, հտ. XXVI, Եր., 2007, էջ 27:

35 **И. Алиев**, История Мидии, Баку, 1960, с. 68; **Յ. Խորիկեան**, Արեւմտեան Պարսկաստանի XVIII սատրապութեան մատինէնների տեղադրութեան շուրջ, էջ 27:

36 Երկարութեան «բերու» միատորը տարբեր ժամանակներում տարբեր հեռաւորութիւններ էր նշանակում (ընդհուպ մինչև 11 կմ): Սակայն Սարգոնի օրերի համար հետազօտողներն ընդունում են մօտ 5,5–6 – 7–8 կմ չափը (տե՛ս **Ն. Ադոնց**, Հայաստանի պատմութիւն, էջ 106; **АВИИУ**, 1951, N 2, с. 334, прим. 29; **К. Л. Оганесян**, Ассиро-урартское сражение на горе Уауш (714 г. до н. э.), «ՊԲՀ», 1966, N 3, էջ 117; ՀԺՊ քրեստոմատիա, էջ 16, ծնթ 17:

37 **АВИИУ**, 1951, N 2, с. 323, § 49; ՀԺՊ քրեստոմատիա, էջ 27:

և Տեսամմիա<sup>38</sup>) և շրջակայ 84 այլ բնակավայրեր<sup>39</sup>: Դրանից յետոյ Սարգոնը դուրս եկավ «Աուկանէ մարգից», անցավ Ուիշդիշ «մաննայական մարզը, որը խլել էր Ուրսան [=Ռուսան]», և յարձակուեց Ուրարտուի արքայի ու դաշնակից արքայիկների՝ Ուաուշ բարձրաբերձ լեռան կիրճում դասաւորուած միացեալ զօրքի վրայ ու կատարելապէս ջախջախեց այն. մագապուրծ փրկուած Ռուսային ու նրա բանակի նահանջած մնացորդներին նա հետապնդեց մինչև «Ջիմնուր՝ հասպիսեայ լեռը»՝ 6 բերու հեռաւորութեամբ (մօտ 36-42 կմ. Սարգոնի մէկ այլ վիմագրում՝ «Տարեգրութեան» մէջ նշուած է «5 բերու»<sup>40</sup>): Մի պահ յետ վերադառնալով՝ նա «ուրախ սրտով, ... ծնծղաներով մտաւ» իր «ճամբարը», ուր գոհեր մատուցեց աստուածներին, ապա աւերեց ու աւարառեց «Ռուսայի խլած՝ մաննացիների Ուիշդիշ մարզը» և, ինչպէս ինքն է գրում, «դէպի Անդիա և Զիկիրտու, ուր ուղղուած էր իմ հայացքը, դադարեցրի իմ արշաւանքը, հայացքս ուղղեցի դէպի Ուրարտու» (դրանից յետոյ զօրքն Ուիշդիշից շարժուեց Ուրարտուի Ուշքայա ամրոցի ուղղութեամբ)<sup>41</sup>:

Ինչպէս համառօտ նշեցինք նաև յօդուածի սկզբում, խնդրի հետ առնչուած բոլոր ուսումնասիրողները Մաննայի և Ուրարտուի թագաւորութիւնների միջև ընկած Զիկիրտու և Անդիա երկրները տեղադրել են առաջինից հիւսիս-արևելք, Ուրմիա լճից արևելք գտնուող և միայն Սարգոն Բ-ի մօտ յիշուած Ուաուշ լեռան հետ իրենց կողմից համադրուող Սոհենդ լեռնազանգուածից հարաւ ու արևելք: Ըստ նրանց քարտէզագրման՝ Զիկիրտուն գրաւել է մօտաւորապէս Սեֆիդուդ գետի (անտիկ՝ Ամարդուսի) ձախ, հիւսիս-արևմտեան մեծ վտակ Շորի (գետաբերանի մօտ՝ Ռուդխանեյե-Կարանգու, Բաբկէն Յարութիւնեանի քարտէզում՝ Հաշտա-ռոտ)<sup>42</sup> աւազանը և յարող տարածքները, իսկ Անդիան՝ Սեֆիդուդի հիւսիսային մեծ ոլորանից (արդի Միանեհ քաղաքի շրջանից) դէպի հարաւ-արևելեան մեծ ոլորանը ձգուող ընդարձակ գետահովիտը (որից յետոյ գետը հիւսիս-արևելեան ուղղութեամբ լայնակի կտրում է Էլբուրսի լեռնաշղթան և հոսում Կասպից ծով): Նման տեղորոշումների համար հիմնական կռուան է ծառայել Ադադներարի Գ-ի (Ք. ա. 810-782) մի վատ ընկալուած բնագրական կտորին յղող վաղ աստուրագէտներից եկած այն մտայնութիւնը, ըստ որի Անդիա երկիրը պէտք է տարածուած համարել մինչև Կասպից ծովի ափերը կամ գոնէ դրանց մօտակայքը: Սակայն առկայ բնագրերի ուշադիր քննութիւնը ցոյց է տալիս, որ մասնագետների՝ իրար կրկնելու եղանակով շարունակուող այդ մտայնու-

38 «Տարեգրութեան» մէջ ասուած է «Միտատի Զիկիրացու երեք ամրացուած քաղաքներ՝ 24 շրջակայ բնակավայրերի հետ միասին» գրաւելու և աւերելու մասին (АВНИУ, 1951, N 2, с. 317, § 46), իսկ մէկ այլ՝ այսպէս կոչուած «Հանդիսաւոր վիմագրում» գրաւուած քաղաքների թիւը նշուած է 23՝ առանց անունները տալու (АВНИУ, 1951, N 3, с. 209, § 54): Ճիշտ է՝ վերջինը կարող է վերաբերուել նաև նախորդ տարուայ արշաւանքի մի դրուագի, որի մասին այլ աղբիւրների նշում չունենք: Թուարկուած 13 քաղաքանուններից մի քանիսի համադրումների փորձ տես ստորև:

39 Տես նոյն տեղում, N 2, с. 323-324, § 49; ՀԺՊ քրեստոմատիա, էջ 27-28:

40 Տես АВНИУ, 1951, N 2, с. 317, § 46.

41 Նոյն տեղում, N 2, с. 325-326, § 49; ՀԺՊ քրեստոմատիա, էջ 30-31:

42 Բ. Յ. Յարութիւնեան, Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբիւրների, Եր., 2001: Տես նաև 2-կմ-անոցում և այլ քարտէզներում:

թիւնն, ըստ էութեան, ամբողջապէս գուրկ է աղբիւրագիտական հիմքից:

**Նախ և առաջ** ուշադրութիւն դարձնենք իբրև թէ Սոհենդին վերաբերուող ճակատամարտի վայր Ուաուշ լեռան, բարեբախտաբար՝ խիստ մանրամասն նկարագրութեանը: Բնագիրն է. «Ուաուշ մեծ լեռան մօտ, որի գլուխը ամպերին հաւասար [բարձրացուած] էր երկնքում, որտեղ դարերով չէր անցել ոչ մի կենդանի էակ, որի ձանապարհները չէր տեսել ձանփորդը և թևաւոր հաւքերն էլ չէին թռչում նրա վրայով ու ձագեր չէին հանում, բուն չէին [դնում], բարձր լեռան վրայ, որ ցցուած է **դաշոյնի սայրի նման** և ուր [սոր յառնում են] անդունդներն ու հեռաւոր լեռնային կիրճերը. մեծ շոգերի ու խիստ սառնամանիքների ժամանակ այդ լեռը [մի] կործանում է, առաւօտեան թէ երեկոյեան շողն է [վրան], օր ու գիշեր նրա վրայ **ձիւն** է կուտակուած, պատուած է մարդաբոյ **սառոյցով**. ով որ անցնի նրա սահմանը, նրա մարմինը խոցում են փոթորիկի պռոթկումները, իսկ [ցրտ]ից այրւում է իրանը, – այստեղ էր նա [Ռուսան] հաւաքել իր մեծաթիւ զօրքը և իր դաշնակիցներին»<sup>43</sup>: Պէտք է նկատի ունենալ, որ Սարգոնի նկարագրութիւնը վերաբերում է ոչ թէ տուեալ լեռան գագաթին, այլ նրա գագաթների միջև ու լանջերին ընկած կածաններին ու կիրճերին, որոնցով անցել էր ինքն իր լաւագոյն զօրաջոկատով և անակնկալի բերել մի հարևան կիրճում ձգուած Ռուսայի զօրքերին: Այդ դէպքում՝ տարածքի ֆիզիկաաշխարհագրական պայմանները յուշում են, որ խօսքը ոչ մի կերպ հնարաւոր չէ վերագրել մեծ մակերեսով լայնօրէն փռուած ու հեռուից տափարակ թասակի տպաւորութիւն թողնող Սոհենդի լեռնագանգուածին (հիմքի մակերեսով նրան զգալիօրէն զիջում են, օր.՝ 5165 մ բարձրութեամբ Արարատը և 4821 մ բարձրութեամբ Սաւալանը): Միաժամանակ՝ իրական ոչ մի բացատրութիւն չկայ, թէ ինչու պէտք է հիւսիսից հարաւ շարժուող զօրաջոկատով անակնկալի բերել մի հարևան կիրճում ձգուած Ռուսայի զօրքերին: Այդ դէպքում՝ տարածքի ֆիզիկաաշխարհագրական պայմաններին քիչ թէ շատ ծանօթութիւնը յուշում է, որ արքայի խօսքը ոչ մի կերպ հնարաւոր չէ վերագրել մեծ մակերեսով լայնօրէն փռուած ու հեռուից տափարակ թասակի տպաւորութիւն թողնող Սոհենդի լեռնագանգուածին (հիմքի շրջանագծի մակերեսով նրան զգալիօրէն զիջում են, օր.՝ 5165 մ բարձրութեամբ Արարատը և 4821 մ բարձրութեամբ Սաւալանը): Միաժամանակ՝ իրականում ոչ մի բացատրութիւն չկայ, թէ ինչու պէտք է հիւսիսից հարաւ շարժուող Ռուսայի մեծաթիւ, ծանրագէն և մարտակառքեր ունեցող բանակը յայտնուէր Սոհենդի գագաթը շրջապատող սարահարթի բարձրադիր հիւսիսահայեաց (ամռանը՝ «ձիւնապատ ու սառցապատ») մասերի՝ ըստ էութեան, չեղած կիրճերում (կողքի կիրճերով ու կածաններով էլ թոյլ տալով թշնամուն՝ գաղտագողի իրեն մօտենալու), եթէ այն կարող էր հանգիստ շրջանցել լեռը նրա արևմտեան ու արևելեան ստորոտներում փռուած լայնարձակ դաշտավայրով կամ բլրաշարերով: Սոհենդից հարաւ և հիւսիս իրականում հնարաւոր չէ նաև մատնանշել քիչ թէ շատ լուրջ լեռներ, որոնք կը համապատասխանէին, ըստ բնագրի՝ Մետատտիի մայրաքաղաք Պարդային յարող Ուաշդիրիկ-կուին, ուր Զիկիրտուի բանակը թէկուզ և անյաջող պաշտպանութեան էր

43 АВИИУ, 1951, N 2, с. 324, § 49; ՀԺՊ քրեստոնմատիա, էջ 28 (միայն սկիզբը):

անցնել, կամ Ուաուշի թիկունքում 5-6 բերու հեռու ընկած Զինմուրին, ուր, ըստ ամենայնի, նահանջող «ուրարտացիները»<sup>44</sup> կարողացան կանգնեցնել յաղթանակած թշնամու առաջխաղացումը դէպի պետութեան կենտրոնական շրջաններ: Եւ փոխարէնը, միանգամից նշենք՝ Ուաուշի սարգոնեան պատկերն ակնյայտօրէն յուշում է Զագրոսի լեռնահամակարգի՝ իրօք, սրաժայռ գագաթների տակ անդնդախոր կիրճերով անցնող բազմաթիւ լեռնանցքները դիտարկելու տարբերակը:

**Երկրորդ.** մասնագէտները համերաշխ են այն հարցում, որ Սարգոն Բ-ի բնագրերում յիշատակուած Զիկիրտու երկրանունը համապատասխանում է անտիկ աղբիւրների *Σαγάρτοι* ցեղանուանը (նաև՝ Դարեհ Ա-ի Բեհիսթունեան եռալեզու արձանագրութեան *Asagarta*-ներին, որ «բնակուում էին մինչև Արբէլայի մօտերքը»)<sup>45</sup>: Վերջինս յայտնի է համարուում դեռևս պատմահայր Հերոդոտոսին, սակայն նրա յիշատակած այդ անունով «պարսկական» ցեղը բնակուում էր Պարսքից շատ արևելք, Աքեմենեանների 14-րդ՝ Զարանդա-Դրանգիանայից մինչև Հորմուզի նեղուց ձգուող սատրապութեան տարածքում<sup>46</sup>: Բայց արդէն Կլաւդիոս Պտղոմէոսի մօտ «սագարտիները» Սարաստանի ցեղերից մէկն են, որ բնակուել են «Զագրոս լեռների արևելեան կողմում» (*“Τά μεν ἀνατολικώτερα τοῦ Ζαγροῦ ὄρους Σαγάρτοι [κατέχουσιν]”*)<sup>47</sup>: Յակոբ Մանանդեանի կարծիքով՝ այդ սագարտիների հետ համադրելի են Պլինիոս Աւագի և Ստրաբոնի կողմից նոյն Մարաստանում յիշատակուած *Sigraie* ցեղը և *Συριάνη* երկիրը, որոնք տեղորոշուում են «այժմեան Սիդեկանի և Ռևանդուզի հիւսիսակողմում և Մեծ Զաւ գետի վերին հոսանքի շրջաններում»<sup>48</sup>: Այս տեղեկութիւնները

44 Ինչպէս փորձել ենք ամփոփել նախորդ աշխատանքում (**Ա. Յ. Յակոբեան**, Հայ ժողովրդի էթնոհամալսման գործընթացի պատմա-մշակութային առանձնայատկութիւնները, էջ 36-45), Ռուսա Ա-ի ժամանակաշրջանից քիչ անց՝ Ք. ա. է դարի առաջին կէսի ընթացքում «Բիսինելե-Ուրարտու պետութեան մէջ և նրա հասարակութեան զարգացման ու ամրապնդման արդիւնքում ... մինչ այդ առանձին ցեղային-ցեղախմբային կայուն ինքնագիտակցութիւն ու ինքնատնտեսութիւն ունեցած աւելի մանր էթնոմիաւորների շրջանում ... էթնոձուլախառնման - էթնոմիքսացիայի տարբերակով՝ իր աւարտին հասաւ ընդհանուր՝ վերցեղային ու կայուն ինքնագիտակցութեամբ միասնական էթնոսի, այն է՝ «\*հայո-ինքնանուն-էթնոսիմով (էնդոէթնոսիմ) բուն հայ ժողովրդի» կազմաւորումը, որն «ընդունել էր ... երկրի տարածքում ծաւալային գերակշռութիւն ունեցած՝ նախահայերէնի բարբառներով խօսող ցեղերի լեզուն»: Ընդ որում «նոր էթնոսի համար ընդունելի են եղել նաև հարևանների կողմից իրեն տրուած ... այլանունանում-արտանունները (էքզոէթնոսիմ): Իրանցիների և յոյների մօտ դա եղել է՝ արմեններ, Արմինա ևն, քարթուէլական ցեղերի մօտ՝ սունէլներ, սէնական ժողովուրդների մեծ մասի մօտ՝ ուրարտացիներ...»:

45 Տե՛ս, օր.՝ **Ն. Աղոնց**, Հայաստանի պատմութիւն, էջ 103; **И. М. Дьяконов**, История Мидии, с. 207, 225, 339-340, 438; Э. А. Грантовский, Сагартти и XIV округ государства Ахеменидов по списку Геродота (III, 93), “Краткие сообщения Ин-та народов Азии”, № 46, Москва, 1962, с. 248-250; **С. М. Кашкай**, Из истории Маннейского царства, Баку, 1977, с. 63; **Յ. Խորիկեան**, Արդպատականի և Մեծ Սարաստանի մ. թ. ա. I - մ. թ. I դարերի պատմական աշխարհագրութեան մի քանի հարցերի շուրջ, էջ 200-201; նոյնի՝ Աքեմենեան Պարսկաստանի XIV սատրապութեան էթնիկական կազմի շուրջ, «Մերձավոր Արևելք», VII, Եր., 2011, էջ 137-142: 46 Տե՛ս **Her.** I, 125; III, 93; **Հերոդոտոս**, Պատմութիւն ինը գրքից, էջ 55, 197:

47 **Ptol.** Geogr., VI, 2, 6; **H. Humbach, S. Ziegler**, Ptolemy Geography. Book 6, Text and English/German Translations, Wiesbaden, 1998, p. 42.

48 Տե՛ս **Յ. Մանանդեան**, Երկեր, հատ. Ե, Եր., 1984, էջ 309-310 (նախապէս տպագրուած է հեղինակի՝ «Պատմա-աշխարհագրական մանր հետազօտութիւններ» աշխատանքում): Հմմ. **Plin.** Nat. Hist., VI, 28. **Я. А. Манандян**, О некоторых спорных проблемах истории и географии древней Армении, Ер., 1956, с. 29-32:

շատ ուղիղ են, ուստի՝ Զիկիրտու–Սագարտիան Զագրոսից 150 կմ հեռու տանող մասնագետները դրանց բովանդակությունը փաստացի անտեսում են և թեթևօրէն կրկնում աւանդական անստոյգ տեղորոշումը:

Միանգամից էլ նշենք, որ ինչպէս երևում է արդէն Յ. Մանանդեանի կողմից ճշգրտուած՝ Պլինիոսի և Ստրաբոնի վկայությունների մեկնաբանությունից (յենուած դեռ Յ. Մարկուարտի դիտարկումների վրայ), այդ երկիրը զբաղեցրել է Զագրոսի լեռներից ոչ միայն արևելք, այլև արևմուտք ընկած շրջաններ: Դա երևում է նաև **Զիկիրտու** (var. Զիկերտու) երկրանունը միջնադարեան հայկական և ասորական աղբիւրներում պահպանուած **Մահկերտու** (նաև՝ Մահկերտուն, ասորական մատենագրութեան մէջ՝ Beth Mahqert<sup>49</sup>) երկրանունն հետ համադրելու բացայայտ հնարաւորութիւնից<sup>50</sup>: Հայկական աղբիւրներից վերջինս յիշատակում են Փաւստոսը (Դ, գլ. Ծ), Ագաթանգեղոսը (գլ. ՃԻ, Մահքրտուն տարբերակով) և «Աշխարհացոյց»-ը (Մարծին Ըստեհն տարբերակով)<sup>51</sup>: Այն դէպի հարաւ էր ընկնում Մեծ Հայքի Կործայք նահանգի արևելեան հատուածից (ուր տեղորոշում է Մուծածիր երկիրը՝ Մեծ Զաքի Նեհիլ և Շամդինան վտակների հովիտներում)՝ Զաքի յաջորդ՝ Բարազգիր և Ռուբարե–Ռևանդուզ վտակների աւազաններում (վերջինի միայն աջ, հիւսիսային կողմում)<sup>52</sup>:

**Երրորդ.** ասորեստանեան մնացեալ բնագրերում Անդիա երկրի յիշատակութիւններն ունեն հետևեալ պատկերը. առաջինը Սալմանասար Գ արքայի (Ք. ա. 859–824) նշումն է: Նա իր իշխանութեան 31–րդ տարում Խուրուշկիայով (Մոկք և Անձևացիք), Մուծածիրով (Ծապարիա քաղաքով), Ուրարտուի հարաւով (Սուգունիա ամրոցով ու Վանայ լճի ափերով) և Գիլգան երկրով (հմն. աշխարհացոյցեան Գգեղիս գաւառը Ադճնիքի արևելքում<sup>53</sup>) անցնելուց յետոյ արշաւանքը շարունակել էր դէպի աւելի արևելք և «բուրիսայցիների [?], խառնայցիների<sup>54</sup>, շաշգանայցիների, **անդիացիների**, (...)րայցիների [?] երկրները» հնազանդեցնելով՝ իջել հարաւի Պարսուաշ երկիր (Սիրվանի վերնահովտում) և ապա Նամրու<sup>55</sup>: Պարզ է, որ եթէ «անդիացիների երկիրը» այլ մասնագետների պէս շտապողաբար փորձենք պատկերացնել Սեֆիդռուդի մեծ ոլորանի կողմերում (ոչ թէ, օր.՝ Մուծածիրի և կենտրոնական Մաննայի միջև ընկած մի տարածքում), ապա դժուար է հասկանալ, թէ ինչու է բնագիրը նրա և Պար-

49 Տե՛ս **J. B. Chabot**, *Synodicon Orientale*, Paris, 1902, p. 272 (Բէթ Մահքերտը Արբելայի նեստորական կաթողիկոսին ենթակայ թեմերից մէկն էր):

50 Արդե՛ծք, մասնագէտ–լեզուաբաններին կը յաջողուի գտնել զոյգ երկրանունների Զի–/Մա–/ և Մահ– սկզբնամասերի հնարաւոր համապատասխանութեան մեկնաբանութիւնը:

51 Տե՛ս **Փաւստոսի Բուզանդացոյ** Պատմութիւն Հայոց, Վենետիկ – Ս. Ղազար, 1933, էջ 163; **Ագաթանգեղայ** Պատմութիւն Հայոց, Աշխատութեամբ **Գ. Տէր–Սկրոյչեան** և **Ստ. Կանայեանց**, 1909, էջ 350; «Աշխարհացոյց» **է դարի Անանունի**, էջ 163: Հմն. **Յ. Մանանդեան**, *Երկեր*, հտ. Ե, էջ 310–323:

52 Տե՛ս, օր.՝ **Ս. Տ. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (Փորձ VII դարի հայկական քարտէզի վերակազմութեան ժամանակակից քարտէզագրական հիմքի վրայ), *Եր.*, 1963, էջ 64, նաև՝ կից քարտէզում:

53 Բոլոր համադրումների համար մանրամասն տես, օր.՝ **Ա. Յ. Յակոբեան**, Հայ ժողովրդի էթնոհամախմբման գործընթացի պատմա–մշակութային առանձնայատկութիւնները, էջ 46–47 (գրականութեան յղումներով):

54 Ըստ Ի. Դեակոնովի ծանօթագրման՝ Մաննայի երկրամաս:

55 Տե՛ս *ВВНУ*, 1951, N 2, с. 297, § 28.



սուաշի միջև նշել ընդամենը մէկ երկիր՝ ‘(...)րայցիներ’ (փոխանակ մարական մի քանի տասնեակ ցեղերին յիշատակելու, ինչպէս որ այլ բնագրերում է): Առաւել ևս, որ Սալմանասար Գ-ի մէկ այլ վիմագրում (որն ընդգրկուած չէ **АВНІУ** դիւանում) «Անդիա»-ն յիշատակուած է իբրև «Նաիրի երկրի քաղաք»<sup>56</sup>, իսկ Նաիրին իր ամենալայն ընդգրկումով պատկերացնելու դէպքում իսկ՝ թոյլատրելի չէ հասցնել այդքան արևելք:

Սալմանասարի այդ արշաւանքից 2-3 տասնամեակ անց Ադադներարի Գ արքան (Ք. ա. 810-782) նշում է, որ իր հպատակեցրած երկրներն էին՝ «սկսած **արևածագի** Սիլուն լեռից՝ Զաբանը, Էլլիպին, Խարխարը, Արագիաշը, Մետուն, Մադայը, Գիզիլբունդան մինչև նրա ծայրը, Մուննուն [=Մաննա], Պարսուան, Ալլաբբիան, Աբդադանան, Նաիրին՝ իր ամբողջ երկայնքով, **Անդիան**՝ ընկած հեռում, լեռների ափամերձ ստորոտները մինչև **Արևածագի մեծ ծովը**...»<sup>57</sup>: Ահա այս տեղեկութեան «Արևածագի [=Արևելքի] մեծ ծովը» է, որ մասնագէտներն անվերապահօրէն նոյնացնում են (մեր օրերում՝ Ի. Դեակոնովի հեղինակութեանը վստահելով) Կասպից լճի հետ և մինչև նրա ափերը հասցնում նախորդի յիշատակուած Անդիան: Փորձելով առաջ տանել՝ ասորեստանցիներին Կասպից ծովի լաւ յայտնի լինելու վերաբերեալ իր թէական դրոյթը՝ Ի. Դեակոնովն, ըստ էութեան, հասկանալի ամեն մի տրամաբանութիւնից դուրս «ենթադրում» է, թէ նրանք այն կոչել են նաև «Արևմուտքի (Արևմուտի) մեծ ծով» (որը Միջերկրականի հիմնական անուանումն է), քանի որ Կասպից ծովն, իբրև թէ, «այդ ժամանակ ասորեստանցիներին, **ըստ երևոյթին**, պատկերացում էր որպէս Սև և Միջերկրական ծովերի հետ հաղորդակցուող և տարբերուող Արևածագի ծովից, այսինքն՝ Պարսից ծոցից»<sup>58</sup>: Սակայն նկատելի է, որ Ադադներարիի հպատակ երկրների ցուցակի առկայ մարական և հարևան ցեղագաւառները չեն հասնում դրանց տարածման հեռաւոր մասերին, որոնք յայտնի են Շամշիադադ Ե-ի և Սարգոն Բ-ի բնագրերից, և սահմանափակուում են լոկ արևմտեան և հարաւ-արևմտեան մարական ու էլամական ցեղանուններով: Իսկ Անդիա երկիրն էլ, ինչպէս նախորդ դէպքում՝ կապուում է «Նաիրի» երկրի հետ, որը հաստատապէս չէր հասնում Մեֆիդոուդի աւազանին և ընդգրկում էր առաւելագոյնը Զամուան (Փոքր Զաբի միջնահովիտ) ու նրանից դէպի Ուրմիա ձգուող մարզերի շերտը՝ «Ներքին Զամուան»: Ուստի՝ «Արևածագի Մեծ ծովը» ոչ թէ Կասպիցն է, այլ հէնց Ուրմիա լիճը (իհարկէ, եթէ այստեղ էլ դա Պարսից ծոցը չէ, որն աւելի յաճախ կոչուում էր Քադդէացիների ծով<sup>59</sup>): Սալմանասար Գ-ի և այլ բնագրերում Ուրմիա լիճը կոչուած է նաև «Նաիրիի ներքին ծով» կամ «Ներքին Զամուայի ծով»<sup>60</sup>: Իսկ մեզ համար կարևոր է նշել, որ

56 A. K. Grayson, Assyrian Rulers of the Early First Millenium BC. II (858-745 BC), p. 89, N 18.  
57 АВНІУ, 1951, N 2, с. 302, § 35 ( այս անուններին հետևում են արևմտեան երկրանունները):  
58 Նոյն տեղում, с. 302, § 34, прим. 7.  
59 Տե՛ս Ի. Դեակոնովի դիտարկումը նախորդ ծնթ. մէջ և հմմ. յաջորդ ծնթ.-ի բնագրերում:  
60 АВНІУ, 1951, N 2, с. 299-300, § 31, 32 («[Սալմանասարս] նուաճողը երկրների՝ Նաիրիի Վերին ծովից ու Ներքին ծովից և Արևամուտի մեծ ծովից մինչև Համանի լեռները ... Էնզիտէից մինչև Սուխնու, Սուխնուից մինչև Մելիդու, Մելիդուից մինչև Դայալէնի, Դայալէնից մինչև Արգաշլունի, Արգաշլունի մինչև Գիլգանու, Գիլգանուից մինչև Խուրուշլիա, Նամրու երկրից մինչև Քադդէացիների ծովը, որը կոչում են Դառը»); с. 300, § 32 («[Սալմանասարս], ով նուաճեց երկրները՝ Նաիրիի ծովից մինչև [Արևամուտի մեծ ծովը ... Տիգրիս գետի ակունքից

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ  
2 (ՃԲ) փարի, թիվ 1 (45) հունվար-մարտ, 2014  
Վէմ համահայկական հանդես

Աղաղներարիի բնագրերում Ուրմիայի համար որևէ այլ անունում, քան այս «Արևածագի մեծ ծովն» է, բացակայում է<sup>61</sup>:

Յալեկնք, որ Զիկիրտուի և Անդիայի ուղղութեամբ Սարգոն Բ-ն արշաւել էր նաև իր իշխանութեան նախորդ տարիներին: Այսպէս, երրորդ տարում (Ք. ա. 719 թ.) նա՝ ըստ իր «Տարեգրութեան»՝ պատժիչ արշաւանք կատարեց Զիկիրտուի դէմ, որի Միտատտի արքայիկը (Լուվրի աղիւսակի բնագրում՝ Մետատտի) Մաննայի դէմ անհնազանդութեան էր դրդել վերջինիս, ըստ ամենայնի՝ արևմտեան մարզերի քաղաքներին. ասորեստանեան գօրքը գրաւեց ու աւերեց ապստամբած Շուանդախուլ, Դուրդուկկա (var. Զուրգուկկա), ինչպէս նաև նրանց յարած Սուկկու, Բալա և Աբիտիկնա քաղաքները (վերջին երեքի բնակիչները գաղթեցվեցին Ասորեստանի արևմտեան կողմերը՝ Խաթթի)<sup>62</sup>: Նշուած քաղաքներից առաջինը՝ Շուանդախուլը, առաւել մեծ հաւանականութեամբ՝ կարող է համադրուել արդի **Շունեկ** լեռնանցքի անուան հետ, որը գտնուում է Ռևանդուզից դէպի Փոքր Զաբի վերնահովիտ (Թագեխանէ քաղաքի շրջանը) տանող ամենայարմար մայրուղու վրայ: Իսկ Բալա անունով բնակավայրն այսօր էլ կայ Սիդեկան և Թոփուզաւա գիւղերից մի քանի կմ հարաւ (ընդ որում՝ այս գիւղերով անցնում է վերը նշուած ուղղութեամբ երկրորդ յարմար մայրուղին):

Զիկիրտուի դէմ Սարգոն Բ-ն նորից արշաւեց իր իշխանութեան վերջերորդ տարում (Ք. ա. 716 թ.). այն իր հարևան Ուիշդիշ մարզի հետ միասին «ապստամբել» ու թոթափել էր Ասորեստանի «լուծը կրող» Մաննայի Ազա թագաւորի գերիշխանութիւնը՝ Ուաուշ լեռան մօտ սպանելով վերջինիս: Սարգոնը ձերբակալեց ու մորթագլերձ արեց Ուիշդիշի Բագդատտի արքայիկին, ապա մտաւ Մաննայի Զիբիա և Արմայիդ ամրոցներն ու մայրաքաղաք Իզիրտու՝ ստիպելով նոր արքայ Ուլլուսունուին հրաժարուել Ռուսա «ուրարտացու» հետ համագործակցութիւն հաստատելու մտքից (դրանից յետոյ աւերիչ արշաւանքը շարունակուեց դէպի Ալլաբրիա և Կարալլու, ապա նաև՝ Պարսուաշ)<sup>63</sup>:

Իր իշխանութեան յաջորդ՝ եօթերորդ տարում (Ք. ա. 715 թ.) Սարգոնը ստիպուած էր նորից արշաւել դէպի Ուիշդիշ մարզ, որի 22 ամրոցները Ռուսան «խալել էր» Ուլլուսունուից: Նա գրաւեց և այս անգամ «իր երկրին միացրեց» այդ ամրոցները (որոնք, այդպիսով, պիտի գտնուած լինէին Մաննայի արևմտեան կողմերում, Ասորեստանին մօտիկ): Դրանից յետոյ Սարգոնը Նաիրի երկրի Խուրուշկիա քաղաքում (Զերմ-Բոհտան-Արևելեան Տիգրիս գետի միջնահովտում) ստացաւ նրա Յանգու արքայիկի տուրքը, ապա արաւորեց «Ուրսայի երկրի» ինչ-որ շրջան («Տարեգրութեան» բնագիրն այստեղ վնասուած է) իր 9 բնակավայրերով. այդ յաջողութիւնից յետոյ ասորեստանեան բանակը նաև հասաւ ու «հնազանդեցրեց Տելուսի-նա **անդիացու** երկիրը» (որն, այդպիսով, չէր կարող շատ հեռու լինել)<sup>64</sup>:

Յալեկնք որոշ տեղեկութիւններ Ասորեստանի արքայական դիւանում

մինչև եփրատ գետի ակունքը, Ներքին Զամուայի ծովից մինչև Քաղդէացիների ծովը»):

61 Հմմտ. **A. K. Grayson**, *Assyrian Rulers of the Early First Millenium B. C. II*, p. 200-238.

62 *AVIUY*, 1951, N 2, c. 316, § 46.

63 Նոյն տեղում, N 2, c. 316, § 46.

64 Նոյն տեղում, c. 317, § 46.

պահպանուած հետախուզական նամակներից: Դրանցից մէկի (АВНІУ դիւանում չընդգրկուած) տեղեկացմամբ՝ «Անդիայի արքայազնը» առատ նուէրներ է ուղարկել Սարգոն Բ-ին և դրանք տեղ են հասել «Մաննայի դեսպանի ձեռքով»<sup>65</sup>: Իսկ Սարգոնի մէկ այլ նամակագիր նրան գրում էր (ըստ Ի. Դեակոնովի՝ հարցականով Բ. ա. 719 թ.). «Ուրարտական արքայի՝ գիկերտների դէմ ուղարկուած կուսակալներից ոմանք անցել են նրանց կողմը, հիմա նրանք միասին կը գան քո դէմ: Զիկերտների պատճառով ես արծաթը դուրս եմ տարել և տեղափոխել ամուր քաղաքում»<sup>66</sup>: Պարզ է, որ չափազանց շատ բան պէտք է անտեսել՝ մտածելու համար, թէ Զիկիրտուն կարող էր Ասորեստանի որևէ քաղաքի սպառնալ, գտնուելով՝ իբրև թէ, Սեֆիդոնդի վտակ Շոր – Կարանգուի հովտում, իսկ, իբրև թէ, Կասպից ծովի ափերը հասնող Անդիայի համար կարող էր միջնորդ դառնալ Մաննայի դեսպանը:

Բերուած տեղեկութիւնները բաւականին միանշանակ ցոյց են տալիս, որ եւ Զիկիրտուն, եւ նրան հարևան Ուիշդիշն ու Անդիան անհրաժեշտ է փնտրել ոչ թէ Ուրմիա լճից արևելք հեռաւոր շրջաններում, այլ Մաննայից հիւսիս և հիւսիս-արևմուտք՝ Ասորեստանին անմիջապէս յարող տարածքում (որը հարևան էր նաև Ուրարտուին): Ու կարելի է չկասկածել, որ Զիկիրտուն Մեծ Զարի արևելեան Բարագգիր և Ռուբարե-Ռևանդուզ վտակների հովիտներում (Մուծածիբից հարաւ) տեղորոշելուց յետոյ հարկ է ընդունել նրան արևելքից հարևան Ուիշդիշ և Անդիա երկրների ճշգրտուած տեղադրութիւնը Ուրմիա լճի հարաւային աւազանում: Ընդամին՝ Ուիշդիշը պիտի տարածուած լինէր Գեղեր գետի վերին ու միջին հովիտներում (Բ. Յարութիւնեանը ենթադրել է գետանունան «Գետառ» ձևը<sup>67</sup>), Ուշնաւիտե – Ուշնու քաղաքի շրջանից մինչև Զագրոս, իսկ Անդիան՝ լճի հարաւային ափերին, Գեղերի ստորին հովիտից մինչև Թաթաւա և Զաղաթու-Ձեռիտե գետերի ստորին հովիտները: Ի. Դեակոնովի դիտարկմամբ՝ ասսուրական բնագրերի Ուիշդիշ անուանը համապատասխանում է բիսիական աղբիւրների Ուգիշթե երկրանունը, որը հնչել է Ուիշթե<sup>68</sup>:

Շատ կարևոր է թում մի փաստ, որը փաստօրէն, վրիպել է հետազօտողների տեսադաշտից, այնինչ, կարծես թէ, լրիւ հաստատում է Անդիայի տեղորոշումը Ուրմիայի հարաւային ափերին: Սարգոնի «Հանդիսաւոր վիմագրում» նշուած է «անդիական Միսի» քաղաքը («Ուրսա ուրարտացին իր խօսքը յղեց Ուիշդիշի մարդուն, Զիկերտուի մարդուն, **անդիական** Միսիի մարդուն, մաննայական մեծ կուսակալներին»<sup>69</sup>: Այն շտապողաբար նոյնացուել է Մաննայի հարաւային Միսի մարզի հետ<sup>70</sup>,

65 Տե՛ս **R. F. Harper**, *Assyrian and Babylonian Letters*, London, 1892, § 466; **И. М. Дьяконов**, *История Мидии*, с. 211, прим. 2.

66 Տե՛ս **R. F. Harper**, *Assyrian and Babylonian Letters*, § 205; **АВНІУ**, 1951, N 2, с. 344, § 50.15. «Զիկերտները» յիշուած են նաև նախորդ և յաջորդ նամակներում (էջ 343-344, § 50.14, § 50.16-17):

67 **Բ. Յարութիւնեան**, Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբիւրների, Եր., 2001: Իսկ այլուր այդ գետը, բացարձակապէս անընդունելի հիմքերով՝ կոչուած է «Արափս»:

68 **И. М. Дьяконов**, *Урартские письма и документы*, Москва-Ленинград, 1963, с. 56, прим. 48.

69 **АВНІУ**, 1951, N 3, с. 209, § 54.

70 Տե՛ս, օր.՝ **Н. В. Арутюнян**, *Топонимика Урарту*, с. 139. Ընմ. նաև **И. М. Дьяконов**, *История Мидии*, с. 211, прим. 1.

բայց, անշուշտ, համապատասխանում է Իշպուինէի (Ք. ա. 825–810) և Մինուայի (810–788) բիաիներէն բնագրերի, այդ թւում՝ տեղում (Ջաղաթուի գետաբերանի մօտ, Տաշ–թեփէ բլրի վրայ) թողած վիմագրի Մէիշտա–Մեշթա ամրոցին («գրաւեցին Մեշթա, Կուա, Շարիթու, Նիգիբէ քաղաքները Պարշուայի երկրի»); «այս ամրոցն աւերեց, Մէիշտա քաղաքը գրաւեց, Մանա երկիրը գրաւեց, այստեղ կայազօր թողեց»<sup>71</sup>:

Ուշագրաւ է նաև, որ բիաինական բնագրում Մէիշտայի շրջակայ երկիրը (Մաննային մօտիկ) կոչուած է Պարշուա (այլ ընթերցման տարբերակով՝ Բարշուա)<sup>72</sup>, և մենք այն, անկախ շրջանառու աւանդոյթից, չպիտի նոյնացնենք Իիալայի հովտի Պարսուաշ երկրի հետ: Ի. Դեակոնովի հանրայայտ դիտարկմամբ՝ «Պարսուա» (<\*Parsava) երկրանունն իրանական հաւանական ստուգաբանութիւնն է՝ «ծայրամաս», «կողմ»<sup>73</sup>: Իբրև հնարաւոր վարկած՝ տեղին նշենք նաև, որ միայն Սարգոնի բնագրերում յիշատակուած Զիկիրտու – Զիկերտու անունով երկիրը Ք. ա. Թ–Ը դդ. բիաինական բնագրերում, կարծես թէ, հանդէս է գալիս իր **Պարդա** մայրաքաղաքի անունը կրկնող **Պուշտու** անունատարբերակով<sup>74</sup>: Ընդ որում այս երկրանունը ևս, անկախ անվերապահօրէն շրջանառուող աւանդական մօտեցումից, չպիտի նոյնացնենք Մաննայից հարաւ–արևելք ընկած Պարսուաշ երկրի Պուշտու – Բուշտու քաղաքի կամ մարզի հետ<sup>75</sup>:

Այսպիսով Զիկիրտուի Աուկանէ մարզը, ուր Սարգոնը մտաւ, ըստ բնագրի՝ մաննայական Պանգիշ ամրոցի դիմացի Իշտարաուրա գետն անցնելով, կարելի է տեղադրել Զագրոսի արևելեան լանջերին, Փոքր Զարի՝ Կելիշին (II, հարաւային) լեռնանցքի լանջերից դէպի հարաւ–արևելք իջնող ակունքի շրջանում, որն էլ հէնց, թերևս, կոչուած է Իշտարաուրա: Այդ վերնահովտի՝ լեռներով սեղմուած «բերանից» անմիջապէս հարաւ–արևելք 2–կմ–անոց քարտէզում նշուած է Սերպոնգէն գիւղը, որի անունն մէջ հնարաւոր է ենթադրել **Պանգիշ** բերդանունն ապահասնուած լինելը (Սեր–**Պոնգէն** = Մեծ, Գլխաւոր Պոնգէն): Նրանից ուղիղ գծով դէպի հիւսիս, նշուած «բերանից» ներս քարտէզներում կայ աւելի մեծ Սերուկանի գիւղը, որի անունն մէջ էլ հնարաւոր է, իբրև վարկած, վերականգնել «Աուկանէ»-ն (>Սեր–Օուկանի): Հաւանաբար, Սարգոնը Զագրոս լեռնաշղթան անցել և Աուկանէից Զիկիրտուի հարաւային ու կենտրոնական շրջաններն էր ներխուժել Իշտարաուրա – վերին Փոքր

71 Տե՛ս **Н. В. Арутюнян**, Корпус урартских клинообразных надписей, Ер., 2001, с. 38–39, 68; ՀԺՊ քրեստոմատիս, էջ 43–44; Ն. Ադոնց, Հայաստանի պատմութիւն, էջ 155: Առաջին (Խառակոնիսի) վիմագրում թուարկուած քաղաքանուններից Նիգիբէ-ն, թերևս, կարող է համադրուել արդի Նեգեղէ քաղաքի հետ (Գեղերի միջնահովտում), իսկ Շարիթու-ն՝ արդի Շարուբենդ գիւղի հետ (Մարի – Բարանդուզի աջ մեծ օժանդակի միջնահովտում):

72 Տե՛ս **Н. В. Арутюнян**, Корпус урартских клинообразных надписей, Ер., 2001, с. 38–39, 166–167; ՀԺՊ քրեստոմատիս, էջ 43–44, 61:

73 **И. М. Дьяконов**, История Мидии, с. 69, 161.

74 Տե՛ս **Н. В. Арутюнян**, Корпус урартских клинообразных надписей, с. 142, 145, 166–167, 172–173, 176–177, 192; ՀԺՊ քրեստոմատիս, էջ 53, 61, 62, 64: Լեզուական Ռ–Շ անցման հնարաւորութեան մասին (ճիշտ է՝ հայերէնի հիմքի վրայ, Լուշա – Լաւո՛ւ, անցման օրինակով) տես, օր.՝ Յովհ. Կարապետգեանի մօտ («Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում...», էջ 161): Յայտնի է, որ ՌՏ (ՐԴ) – Շ անցում կայ Անեստայի լեզուում: Արդե՛ծք կարելի է քննարկելի համարել նաև Շուանդախուլ – Ռանանդուզ համադրման վարկածը:

75 Այդ շփոթը տես, օր.՝ **Н. В. Арутюнян**, Топонимика Урарту, с. 61 (յղում գրականութեամբ):

Զաքի ակունքներից դէպի արևմուտք՝ Մեծ Զաքի ձախ (արևելեան) Բարազգիր և Ռուբարե-Ռևանդուզ վտակների աւազաններ տանող և այսօր էլ գործող 3 լեռնանցքներից մէկով: Դրանցից նոյն Կելիշին անունը կրող հիւսիսայինը (բարձրութիւնը՝ 2944 մ)<sup>76</sup> տանում էր դէպի Բարազգիրի ամենավերին ձախ վտակ Դոլանջայի հովիտ (այս լեռնանցքի ստորոտում է յայտնաբերուել Իշպուինէ արքայի /Ք. ա. 825-810/ երկլեզու՝ արքադերէն և բիսիներէն վիմագրով կոթողը<sup>77</sup>), նրանից 5 կմ հարաւ ընկած Բերբազին լեռնանցքը (բարձրութիւնը՝ 2804 մ) տանում էր դէպի Ռուբարե-Ռևանդուզի մեծ ձախ վտակ Ռուբարե-Ջենէի վերնահովիտ, իսկ ևս 3 կմ հարաւ ընկած Մամարա-Մինդեր լեռնանցքը (բարձրութիւնը՝ 2964 մ)՝ դէպի Ջենէի ձախ վտակ Թոփուզաւայի հովիտ (վերջինիս միջնահովտի նոյնանուն գիւղից մի փոքր հիւսիս յայտնաբերուել է Ռուսա Ա-ի երկլեզու՝ արքադերէն և բիսիներէն վիմագրով նշանաւոր կոթողը<sup>78</sup>):

Զիկիրտուի կենտրոնական մասում արդի քարտէզներում նշուած **Պարաս** գիւղը՝ Բարազգիրի աջ (հիւսիսային) մեծ վտակ Ռուբարե-Խւակուրէի միջնահովտում, կարող է համադրուել այդ երկրի **Պարդա** մայրաքաղաքի, իսկ **Կաուտ** և **Սիդեկան** գիւղերը (Բարազգիրի և Թոփուզաւայի հովիտներում)՝ համապատասխանաբար **Կարանի** և **Սիտերու** ամրոցների հետ: Ուաշդիրիկկու լեռանը կարող է համապատասխանել Պարասից հարաւ յառնող լեռնագագաթը, իսկ Ուաուշին՝ Գեդերի գետահովտից դէպի Մարի գետի (նոր ժամանակներում՝ Բարանդուզ) աւազան տանող լեռնանցքը՝ Զարասպ-Դոլամպար (3451 մ) և Ուլուզդերէ (3470 մ) սրածայռ գագաթների միջև: Վերջապէս՝ **Զիմնուր** լեռնանունն հետ, որը Ուլուզդաղից հէնց այդքան հեռաւորութեան վրայ բաժանում է Ուրմիայի աւազանի Բերդեսուր գետի (հին՝ Թրաքի, ըստ Բ. Յարութիւնեանի՝ = Բերդաձոր) ու Մեծ Զաքի Նեհիլ վտակի վերնահովիտները և արդի քարտէզներում քարտէզներում կոչուում է **Սիբարիզ**:

Ուաուշի ձակատամարտի նկարագրութիւնը Լուվրի աղիւսակում

76 Շատ աւելի հիւսիս գտնուող միւս Կելիշինով՝ Զարասպ - Դոլամպար լեռնագագաթի (3451 մ) հիւսիսային լանջերով անցնում էր թէ՛ Ուրարտուի, թէ՛ հետագայ Մեծ Հայքի թագաւորութեան համար ռազմավարական մեծ նշանակութիւն ունեցող (հարաւային սահմանին զուգահեռ) ճանապարհը, որը 2811 մ բարձրութեան վրայ միմեանց էր կապում Մեծ Զաքի ձախ վտակ Շանդինանի (հսմ. Կադմէից տոհմանունը աշխարհացոյցեան Կորձայք նահանգի արևելքում) և Ուրմիայի աւազանի Մարի (նոր ժամանակների՝ Բարանդուզ) գետի վերնահովիտները: Ն. Ադոնցն այդ լեռնանցքին է վերագրում Զիմնուր լեռնանունը, մինչև ուր դէպի Մուծածիր էր նահանջել Ուաուշ լեռան ձակատամարտում պարտութիւն կրած Ռուսա Ա-ն (Ն. Ադոնց, Հայաստանի պատմութիւն, էջ 108):

77 Տե՛ս **Н. В. Арутюнян**, Корпус урартских клинообразных надписей, с. 25-27. Տեղին նշենք, որ այստեղից 7-8 կմ աւելի հիւսիս ընկած Բարազգիրի ակունքներից դէպի հիւսիս-արևելք՝ Գեդեր գետի վերնահովիտ էին տանում առաւել յարմար Բերդարու և Բերդարու-Հարամի լեռնանցքները (2345 և 2061 մ), որոնցով էլ, ամենայն հաւանականութեամբ, անցել էր Սարգոնը՝ Զիկիրտուից դէպի Ուիշդիշ մարզ և Ուաուշ լեռը շտապելիս: Այս բոլոր լեռնանցքներն, ըստ ամենայնի, եղել են Ք. ա. Թ-Ը դարերի ուրարտա-ասորեստանեան ռազմավարական հակամարտութեան կարևորագոյն կէտերը:

78 Տե՛ս **Н. В. Арутюнян**, Корпус урартских клинообразных надписей, с. 289-291; ՀԺՊ քրեստոմատիա, էջ 82-83: Վերջերս Այլի - Նազլուի միջնահովտի հարաւային մասում, Մովանա - Մևանա գիւղի մօտ յայտնաբերուել է այս արձանագրութեան գրեթէ կրկնակը. տե՛ս B. André-Salvini, M. Salvini, The Bilingual Stele of Rusa I from Movana (West-Azerbaijan, Iran), «Studi Micenei ed Egeo-Anatolici», fasc. XLIV/1, Roma, 2002, p. 5-66.

տրուած է բաւականին մանրամասն, և դա թոյլ է տալիս ամբողջական պատկերացում կազմել նրա ճշգրիտ տեղի ու հանգամանքների մասին: Այդ պատճառով խիստ տարակուսանք է յարուցում որոշ ուսումնասիրողների այն պնդումը, թէ ճակատամարտը եղել է ճակատային (փաստօրէն՝ հարթավայրային) և հակառակորդ բանակների ամբողջական կազմերի մասնակցութեամբ (տրուում են անգամ համապատասխան գծագրեր)<sup>79</sup>: Ստորև բերուող բնագրում ընդգծել ենք այն տեղիները, որոնցից ակնյայտ է դառնում, որ ճակատամարտի առաջին փուլում Սարգոնը, լեռնային բարդ կածաններով շրջանցելով հակառակորդին, իր բանակի մի արագընթաց ջոկատով ուղղակի ծուղակի մէջ է առել լեռնանցքի կիրճում (=Մերզգիարեթի լեռնանցք) երկար տարածութեան վրայ ձգուած բիաինական զօրքերի այն կոնկրետ հատուածը, ուր գտնուում էր Ռուսա արքան. «Աշշուր աստծու տանջուած զինուորները, որոնք հեռաւոր ճանապարհ էին կտրել, **յոզնած ու ուժասպառ էին, անցել էին անհամար բարձր լեռնաշղթաներ**, որոնց բարձրանալը և վայրէջքը դժուարին էր՝ եւ թոյլ չտուի նրանց հանգստանալ, ծարաւս հագեցնելու համար ջուր չխմեցի, հանգստավայր չհաստատեցի, **ճամբար չսարքեցի**, իմ զինուորների յետևից չուղարկեցի, իմ **բանակը չհաւաքեցի**, աջ ու ձախ կողմերում գտնուողները **չհասցրին իմ կողմը գալ**, իսկ **յետևից եկողներին չսպասեցի**. չվախեցայ նրա [Ռուսայի] բանակի բազմաքանակութիւնից, արհամարհեցի նրա ձիերին, հայացքի չարժանացրի նրա բազմաթիւ լանջապանակաւոր զինուորներին, միայն իմ **անձնական մարտակառքով և թիկնապահ ձիաւորներով**, որոնք [ինչպէս] օտար վայրում [այնպէս էլ] խաղաղութեան ժամանակ չեն լքում [ինձ], **Սինախուծուրի ջոկատով**, ինչպէս զայրացած տեգ, **նրա սրտին զարկեցի** և նրան պարտութեան մատնեցի, **կանխեցի նրա գրոհը**, մեծ **կոտորած կազմակերպեցի**, նրա զինուորների դիակները բակլայի նման շաղ տուի, լեռների լանջերը լցրի, նրա[նց] արիւնը գետի նման կիրճերում և վիհերում հոսեցրի, դաշտերը, հովիտները և բլուրները կարմիր բրդի նման ներկեցի, նրա ռազմիկներին, նրա նետաձիգներին, նիզակակիրներին նրա ոտքի առաջ գառան նման մորթեցի, նրանց գլուխները հատեցի, նրա առաջաւորների, խորհրդականների և մերձաւորների գէնքերը դաշտում ջարդեցի, նրանց [իրենց] ձիերի հետ վերցրի, նրա թագաւորական ընտանիքի 260 ներկայացուցիչներին, մերձաւորներին, մարզպաններին, ձիաւորներին իմ ձեռքով բռնեցի, նրա **ճակատը կազմալուծեցի**, իսկ նրան [իր] **ճամբարի բազմութեան մէջ փակեցի**, նրա լծկան ձիերին տեգերի ծայրերով ոչնչացրի: Իր կեանքը փրկելու համար [նա] իր մարտակառքը լքեց, նստեց մատակ ձի և իր զօրքի առջևից փախաւ»: Մրա անմիջական շարունակութիւնը պէտք է համարել ճակատամարտի երկրորդ փուլի՝ խուճապի մատնուած մնացեալ ուժերին կոտորելու նկարագրութիւնը. «Ջիկերտացի Մետատտիի և նրա հարևան թագաւորների հաւաքը կործանեցի, նրա [Մետատտիի] գունդը ցաքուցրիւ արի, չար թշնամու՝ **Ուրարտու երկրի զօրքը և նրա դաշնակիցներին** պարտութեան մատնեցի, Ուաուշ լեռան մօտ կռացրի նրանց կուրծքը, նրանց ձիերը կիրճերն ու անդունդները լցուեցին, իսկ նրանք, ինչպէս մրջիւնը նեղութեան մէջ, բռնե-

79 Տե՛ս, օր.՝ **К. Л. Оганесян**, Ассиро-урартское сражение на горе Уауш, էջ 111-114:



ցին **[փախուստի] դժուար ճանապարհները**»: Դրան էլ յաջորդում է ճակատամարտի շարունակութեանը՝ նահանջողներին հետապնդելուն վերաբերող նկարագրությունը. «Իմ ահեղ զէնքի զայրոյթով նրանց յետնից ես ելայ, **վերելքն ու վայրէջքը** լցրի ռազմիկների դիակներով: 6 բերու տարածութիւն՝ Ուաուշ լեռից մինչև Զիմնուր հասալիսեայ լեռը, սուր տեգերով հետապնդեցի նրանց, մնացած մարդկանց, որոնք իրենց կեանքը փրկելու համար փախան, արձակեցի, որպէսզի գովաբանեն Աշշուրի՝ իմ տիրոջ հզօրութիւնը»<sup>80</sup>:

Ինչպէս նշեցինք վերևում, Սարգոնի նկարագրած Ուաուշ լեռան լեռնանցքն, ամենայն հաւանականութեամբ, համապատասխանում է 1 և 2-կմ-անոց քարտէզներում Գերդենեյե-Մերգզիարեթ կոչուած՝ 2810 մ բարձրութեամբ լեռնանցքին՝ Բուիե-Մերգզիարեթ (3307,7 մ արևելքում) և Ուլուգդաղ (3470 մ, արևմուտքում) լեռնագագաթների միջև: Հնարաւոր չէ բացառել նաև վերջինի և աւելի արևմուտք յառնող բուն Զարասպ – Դոլամպար (3451 մ) սրածայռ լեռան միջև ընկած Գերդենեյե-Բոզսիսա լեռնանցքով անցած լինելու տարբերակը: Ընդամին՝ այն աւելի բարձր է (2850 մ) և շատ աւելի անյարմար, սակայն, գուցէ, անգամ հէնց նրանով է անցել Սարգոնի արագընթաց ջոկատը հարաւից հիւսիս, ապա Ուլուգդաղի գագաթամերձ հիւսիսահայեաց («ձիւնապատ ու սառցապատ») ժայռերի տակով արևելք շարժուել և յանկարծակիի բերել Ռուսայի՝ Մերգզիարեթի լեռնանցքով ձգուած զօրասեան կենտրոնական հատուածին:

Սարգոնի բնագրերը թոյլ են տալիս նաև որոշել այն ուրարտական մարզը, որն ընկած էր ճակատամարտի լեռնանցքի թիկունքում: Դա **Ուասի** մարզն էր, որտեղ, ըստ Կալխուի արքայական դիւանում պահպանուած՝ մի ասորեստանեան լրտեսի հետախուզական հաղորդման՝ հաւաքուել էր Ռուսայի բանակը՝ դէպի Զիկերտու շարժուելու համար: Սեպագիր փաստաթղթի լրիւ բնագիրն է. «Ուրարտացի արքայի մասին լուրի վերաբերեալ. անդիացիների սուրհանդակը և գիկիրցիների սուրհանդակը եկել են **Ուասի** և խօսել նրա հետ. «Ասորեստանի արքան շարժում է մեր վրայ»: Հէնց որ նա տեսաւ սուրհանդակներին, նա դուրս եկաւ դէպի Զիկիրու: Նա իր և խուբ[ուշ]կիացիների զօրքերի հետ էր՝ 5 անցումների հեռաւորութեան վրայ, սակայն վերադարձաւ և ասաց իր մեծամեծերին. «Հաւաքէք ձեր զօրքերը: Ես ճակատամարտի եմ շարում Ասորեստանի արքային վերացնելու համար՝ շրջանցելով (?) **[անշուշտ, ճիշտն է՝** անցքում = լեռնանցքում – Ա. Յ.]»:

Այդ պատճառով նա ճակատամարտի շարուեց շրջանցելով (?) **[անշուշտ, ճիշտն է՝** անցքում – Ա. Յ.]»<sup>81</sup>: Այդ լրտեսի (Բելիդդին) նշած մարզանունը **Ուասի, Ուայսի և Ուէսի** ձևերով առկայ է նաև Սարգոնի ստացած բազմաթիւ այլ հետախուզական նամակներում<sup>82</sup> (և զարմանալիօրէն՝ այն բացակայում է Լուվրի ադիւսակի բնագրում կամ «Տարեգրութեան» մէջ): Ամենայն հաւանականութեամբ, **Ուասի – Ուէսի** մարզանունը համապատասխանում է աշխարհացոյցեան Մեծ Հայ-

80 АВИИУ, 1951, N 2, с. 325, § 49; ՀԺՊ քրեստոմատիա, էջ 44–45:

81 АВИИУ, 1951, N 2, с. 345, § 50.17.

82 Տե՛ս АВИИУ, 1951, N 2, с. 337–338, § 50.2–5; с. 339–340, § 50.8–9; с. 343, § 50.14; с. 345, § 50.17–18; с. 348, § 50.27.

քի Պարսկահայք նահանգի **Արիսի – Արուեսի** (ամբողջական գրչագրում՝ **Արիսի**) գաւառանունը<sup>83</sup>: Արիսի գաւառն ընդգրկում էր նահանգի ողջ հարաւ–արևելեան, լճափնեայ գոտին, մինչև Ուրմի քաղաքի (արդի՝ Ուրմիա, Ռեզայէ) հիւսիսակողմը: Պարզ է, որ Ռուսայի ժամանակներում նոյնանուն մարզի մէջ էին մտնում նաև աշխարհացոյցեան զագրոսամերձ գաւառները՝ Այլին, Թրաքին և Սարի գաւառը, համապատասխանաբար՝ Նազլու (հին՝ Այլի), Բերդեսուր և Բարանդուզ գետերի վերնահովիտներում: Ի դէպ, գուցէ, կարելի է կապ դիտարկել վերջին **Բարանդուզ** գետանունի և **Սարի** գաւառանունի միջև (տարածուած Մ–Բ–Մ հնչյունափոխութեամբ<sup>84</sup>):

Աւարտելով Սարգոն Բ–ի արշաւանքի առաջին փուլի երթուղու քննութիւնը՝ մինչև Բիափնելէ–Ուրարտուի թագաւորութեան սահմանները, նշենք, որ այդ սահմանակէտի ճշգրտումը կատարուած է արդէն Ն. Ադոնցի և Յ. Մանանդեանի կողմից, որոնք թէպէտ, հետևելով աւանդական կարծիքին, Զիկիրտուն և Անդիան տեղորոշում են Ուրմիա լճից շատ արևելք, բայց միաժամանակ փաստարկում են (և քարտէզագրում), որ Ուիշդիշ մաննայական և Ուէսի բիափնական մարզերը գտնուել են համապատասխանաբար՝ Գեղերի և Բարանդուզի հովիտներում<sup>85</sup>: Ճիշտ է՝ Ուաուշի ճակատամարտի վայրը նրանք դնում են արդի Օշնավիեի քաղաքից հիւսիս բարձրացող Դերբենդի սահմանային լեռնանցքում (Մերզգիարեթ լեռնագագաթից 8 կմ արևելք), որով ներկայումս անցնում է ատոմայրուդին (բարձրութիւնը՝ 1905 մ): Իսկ մենք փորձեցինք ցոյց տալ, որ Սարգոնի մանրամասն նկարագրութիւնը յուշում է դէպի արևմուտք ընկած աւելի բարդ լեռնանցքների դիտարկման անհրաժեշտութիւնը:

**Ալեքսան Յակոբի Յակոբեան** – գիտական հետաքրքրութիւնները՝ Ադուանքի և Հայոց Արևելից կողմանց քաղաքական պատմութիւն և աղբիւրագիտութիւն. հայ մատենագրութիւն, վիճագրագիտութիւն և բնագրերի հրատարակում. Այսրկովկասի երկրների էթնիկական պատմութիւն և պատմական աշխարհագրութիւն:

Աշխատանքները – *Албания–Алуанк в греко–латинских и древнеармянских источниках*, Ер., 1987; Պատմա–աշխարհագրական և վիճագրագիտական հետազոտութիւններ (Արցախ և Ուտիք), Վիեննա–Եր., 2009; Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարաւնոյ, Գիտաքննական բնագիրը Ա. Յակոբեանի, «Մատենագիրք Հայոց», հատ. Դ–Ե, Է դար, Անթիլիաս, 2005, էջ 973–1126; Անանուն (Է դար), Աշխարհացոյց, Գիտա–քննական բնագիր Ա. Յակոբեանի, «Հանդէս ամսօրեայ», Վիեննա–Եր., 2013, էջ 35–194:

83 Տե՛ս **Անանուն (Է դար)**, Աշխարհացոյց, էջ 134: Հմմ. նաև 2517 մ բարձրութեամբ **Աբրաշիմ** լեռնագագաթի անունը՝ Բարանդուզի աջ մեծ օժանդակի արևելեան ջրբաժան լեռնաշղթայի կենտրոնում:

84 Տե՛ս, օր.՝ **Ա. Յ. Յակոբեան**, Հայ ժողովրդի էթնոհամալսման գործընթացի պատմամշակութային առանձնայատկութիւնները, էջ 46, ծնթ. 55:

85 Տե՛ս **Ն. Ադոնց**, Հայաստանի պատմութիւն, էջ 108–109; **Յ. Մանանդեան**, Երկեր, հատ. Ե, էջ 468–471:

**THE CAMPAIGN OF ASSYRIAN KING SARGON II ON URARTU AND THE HISTORICAL GEOGRAPHY OF ANCIENT ARMENIA**

ՊԱՏՄԱՆԻԹՅՈՒՆ

Part I. The rout of king Sargon II’s campaign to Urartu in 714 B. C.

Aleksan H. Hakobyan

The detailed analysis of the texts of king Sargon II about his campaign east and north in 714 B. C. allows us to correct or clarify the route of the Assyrian troops in several cases. In particular, the small kingdoms Andia and Zikirtu mentioned between the countries Manna and Urartu are actually localized not to the east of Lake Urmia, but to the south and south-west of it; Zikirtu corresponds to medieval province Mahkertu (bordering Greater Armenia) in the river basin Barazgir, and Andia corresponds to “country Parsua” of early Urartian texts (on the southern shore of Lake Urmia – “Great Sea of the East”), with the city Meišta / Misi.

Հ (ԺԲ) քարթ, թիվ 1 (45) հանդիսար-նարք, 2014

Резюме

**ПОХОД САРГОНА II АССИРИЙСКОГО НА УРАРТУ И ИСТОРИЧЕСКАЯ ГЕОГРАФИЯ ДРЕВНЕЙ АРМЕНИИ**

Часть I: Маршрут похода до Урарту в 714 г. от Р. X.

Алексан А. Акопян

Детальный анализ текстов царя Саргона II о его походе на восток и север в 714 г. до Р. X. позволяет во многих местах исправить или уточнить маршрут ассирийского войска. В частности, небольшие царства Андиа и Зикирту, упомянутые между странами Манна и Урарту, локализуются не к востоку от озера Урмия, а к югу и юго-западу от него; Зикирту соответствует средневековой провинции Маһкерту (пограничной с Великой Арменией), в бассейне реки Баразгир, а Андиа – «стране Парсуа» ранних урартских текстов (на южном берегу Урмии – «Великого моря Востока»), с городом Мэишта / Миси.

ՎԷ՛՛՛ հանդիսարձայն հանդես